

Հ. ՂԱՆՑԱՆՑՈՒ


ԽՍՏԱԿՅԱՆԻ
ԼԻՐԻԿԱՆ

891.89.092 [հասեակյան]

Դ-36







Ավետիք Իսահակյան
(Գործ ժողովրդ Ակադեմիկ Մ. Սարյանի)

891.99 .092 [Բանկության 7]
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Հ - 36
Մ.

6 NOV 2011

ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԼԻԹԻԿԱՆ

ՀԱՅԹԵՍՑՐԱՑ
ԵՐԵՎԱՆ 1940

19 JUN 2013

69.986

Поэт Исаакян первоклассный; может быть такого светлого и непосредственного таланта теперь во всей Европе нет.*)

А. БЛОК

Ավետիք Իսահակյանը, վորի ստեղծագործական տարերքը հիմնականում լիրիկան է, սերել է 19-րդ դարի արևելահայ քնարական բանաստեղծությունն ու կոնավորող Սմբատ Շահաղիզի քերթողական զարմից։ Այդ բանը չի ժիտում և ինքը բանաստեղծը։ Իր ուսուցչին՝ Հովհաննես Հովհաննիսյանին ուղղված մի նամակում (գրված նրա գրական գործունեյության յերեսուն-ամյակի առթիվ) Իսահակյանը շեշտում է այն հանդամանքը, վոր ինքը, գրականության մեջ իր սկզբնական քայլերն անելիս, աշակերտել է Հովհաննիսյանին. «Յես առաջին անգամ խմեցի բանաստեղծության նոր իսկական աղբյուրից, վորովհետև դու ինքը եւիր վոսկեղեն աղբյուրը, վոր կարկաչում եյիր հայոց հին ու նոր յերգերի սահմանադում»**), գր-

*.) Ա. Բլոկի 1916 թվին գրած նամակից։

**) Տես «Քաղաքի ճայն» 1913 թ. № 89



40
О. Аналанян
Лирика Иссакяна
Гиз Армянской ССР Ереван, 1940

լում և իսահակյանը։ Իր գրական դործունեյության վաղ շրջանում ընթանալով Հովհաննիսյանի բաց արած ճանապարհով և հետեւելով նրա գրական լավագույն տրադիցիաներին, իսահակյանը հետադայում ինքն ել իր հերթին ստեղծեց յուր գրական դպրոցը և ունեցավ հետեւողների մի ամբողջ հույլ, վորի ամենատաղանդավոր ներկայացուցիչն եր իր գրական առաջին քայլերն անող վահան Տերյանը։

Իսահակյանի պոեզիան փիթթել և տակավին անցյալ դարի 90-ական թվականների վերջերից սկսած՝ (նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն լույս ե տեսել 1898 թվին)։ Մի շրջան եր դա, յերբ Անդրկովկասի ու Հայաստանի Հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքը հղի յեր հակասություններով։ Արդյունաբերական կապիտալիզմի անհարմանից վերելքն սպառնում եր ավերել գյուղական մանրիկ տնտեսությունները՝ «բունավեր թուչունի» վիճակի մեջ դցելով դյուղացուն։

Տնտեսական կյանքում առաջացած այդ հեղաշրջման հետևանքով ճգնաժամային վիճակ եր ստեղծվել Անդրկովկասի քաղաքներում ապրող մանր արտադրողների և արհեստավորների համար ևս։ Արդյունաբերական կաղիտալիզմի ստեղծած խոչըն արտադրության մրցմանը չեյին կարող դիմանալ խրդճուկ անայնադրձն ու արհեստավորը։ Դրամական հարատե տագնապի մեջ եյին նաև մեր մտավորակա-

նությունն ու դրողների մեծադույն մասը, վորոնց համար հանապաղորյա դժվար լուծելի հարց եր հայելինդիրը։ «Ազգատացող շատ, հարստացող քիչ»— այս պես ե բնորոշել իսահակյանն այդ ժամանակվա տընտեսակարգը։

900-ական թվականներին պատմականորեն հաւջորդող հետագա շրջանը 1905 թվից հետո սկսվող ուսակցիայի տարիներն ելին, յերբ մեր առաջավոր մտավորականության ակնկալություններն այդ հեղափոխությունից ի գերեւ եյին յելնում և հուսախարությունը կատարյալ եր դառնում։ Նույն այդ շրջանում եր, վոր «վուշու սով» եր գուշակում իսահակյանը հայ հղիացած բուրժուազիայի համար, վոր ցարական թուսաստանի գործականների հետ միացած հալածում, ծաղրում եր մայրենի լեզուն ու մեր ստեղծադորձ միտքը^{*)} ի լրումն այս ամենի, պետք ե հիշել նաև 1906, 1918 և 1920 թվերի աղւամիջյան ջարդերն ու ավերածությունները։ Այս ամենն ընդհանուր առմամբ անհանդիստ վիճակ եր ստեղծում մեր հումանիստ պնեսի համար, վոր իր հոգու ականջը սրած՝ անծայր աշխարհի ամեն խորչից լսում եր հանուրի

*) Հիշենք 1885 թ. հայկական դպրոցների վակման փաստը ցարական նուսիայի գործակալ Գոնդուկով— Կորսակովի կողմէց։ Հիշենք 1889 թվականը, յերբ պետական վորոշմամբ արդեկեց հայոց պատմության ավանդությը մեր դպրոցներում, իսկ 1896 թ. փակեցին 168 հայկական դպրոցներ, վորից մի տարի հետո, 1897 թ. վերացվեց նաև մեր դպրոցների ինքնուրությունը։

Վողբն ու հեծեծանքը, միշտ և ամենուրենք:
Յեվ այդ ամենը,—

կաթիլ ու կաթիլ հավաքվում,
Գալիս, թափվում եյին

Նրա «վշտոտ», «խոցված» սրտի մեջ...

Հասարակական կյանքի այս հողից «ծնալ-սնալ»
Ավետիք Իսահակյանի անհանդիսան բնավորություն
ունեցող նյարդոս պուելիան:

Իսահակյանի յերգերում արտահայտվել ե բա-
նաստեղծի դժողովությունը տիրող կարգերից՝ մերթ
ուղղակի բողոքի շեշտով, յերբեմն խեղդված հեկե-
կանքով: Այդ յերգերում արձագանք են գոել ճղնա-
ժամային այն նոպաները, վորին յենթակա յեր 90-ա-
կան 900-ական և հետագա ժամանակների (ընդհուպ
մինչև 1917 թիվը) մեր առաջավոր մտավորականու-
թյունը:

Իսահակյանի լերիքական ստեղծագործությունների
առյուծի բաժինը կազմում են սիրո յերգերը: Դրանք
հիմնականում անարձագանք մնացած դժբախտ սիրո
սոմանտիկ յերգեր են, վորոնց տակ սոցիալական խոր
իմաստ և թագնված:

Իր բանաստեղծությունների անդրանիկ ժողովա-
ծուի մեջ, վոր լույս ե տեսել 1898 թ., Իսահակյանն
ինքն ել շեշտում ե իր գլխավորապես սիրերգակ լի-
նելը: «Առաջաբանի տեղ» գրված մի յերգում, նա

պարզ ու մեկին հայտարարում ե, վոր իր քնարի
բոլոր մյուս լարերը խզվել, կտրվել են՝ բացառու-
թյամբ սիրո լարի.

Մենակ սիրո լարը մնաց
Սրտիս անհուն խորքերում,
Մենակ սիրո յերգը չողաց
Կյանքի ամեն ծալքերում:*)

Իսահակյանը խորապես ապրել ե իր յերկած սիրո
զգացումը: Գյոթեյի նման նա կարող ե ասել, թե՝
«Սիրային բանաստեղծությունները յես զրել եմ միայն
այն ժամանակի, յերբ սիրահարված եյի»**): Իսահակ-
յանի սիրը յեղել ե անարձագանք մնացած և նրա
պատում լայն վերք բաց արած մի դժբախտ սեր: Յե-
րիտասարդ պոետի յերգած սերը «գարունքվա պես
բոնկված», «վիթի նման աղջկան» եր ուղղված: Ան-
միջական ու բուռն զգացմունքներից են հորդել պոետի
սիրո յերգերը: Սիրող սրտի հավելվածից ե խոսել
անաստեղծը յերբ ասել ե,—

Հոգիս հարբած
Քու համբույրեն,
Յերգս ծփաց
Ինքն իրեն...

*) Իր բանաստեղծությունների 1908 թ. և հետագա հրա-
տարակությունների մեջ «Մենակ սիրո յերգը չողաց» տողը
բանաստեղծը գարձրել է «Ու վառ սիրո յերգը չողաց»:

**) «Разговоры Гете» 1891 г., собранные Эккер-
манином.

Սիրո ծարավի բանաստեղծն ամեն տեղ ու ամեն
ինչի մեջ իր սիրուհու պատկերն եւ վորոնում։ Հո-
դեբանորեն սա շատ բնորոշ հանդամանք եւ սիրահար-
ված մարդու համար։ Բանաստեղծի միոքը, ինչպես
յերեսում եւ այդ նրա սիրո յերգերից, շարունակ հա-
ծել եւ այդ ուղղությամբ։ Շուշիկի ողատկերը նա վո-
րոնել եւ անձկությամբ, վորի հանդեա տածած իր
անհուն սերը ցույց տալու համար բանաստեղծը ան-
թիվ ու անկարելի «կուղես լինեմ»-ների խոստում-
ներ եւ անում նրան։

Ի՞նչ վոր ցանկաս, կո՞ւղես լինիմ,
Լինիմ յերկինք ու յերկիր,
Լինիմ ծո՛վ, ժա՛յո, արկ', լո՛ւսին,
Միա՛յն, միա՛յն ինձ սիրե՛ք...

Բանաստեղծի հոգին վկայել եր, վոր Շուշիկն ու-
րիշն պիտի պատկանի, և հիրավի այդպիս եւ մե-
նում ե։ Նա տեսնում ե, վոր Շուշան յարը, իր հոգու
հատորը, խլվում է իրենից։ Ի՞նչ եմնում այս բոլորից
հետո անդին ու անդոր յերիտասարդ՝ պոետին— վոդ-
բալ իր կորուսաը «լա՛լ, արո՛ւն լալ»։



Խեղդամահ յեղած սերը բանաստեղծին առիթ տվեց
ել ավելի «հոնքուր-հոնքուր» «լաց լացել»։ «Յարիս
տարան», ջանիս տարան» աղեկտուր ձայնում ե պոետը
և նրա այս լացի հետ միախառնվում են «զուլում աշ-
խարհի», «արունքտեր տերերի» դեմ ուղղված բողոքի
չեշտեր։

Սիրեցի, յարս տարան։
Յարա տվին ու տարան, —
Ես ի՞նչ զուլում աշխարհ ե.
Պոկեցին սիրոս ու տարան։

Պոկելով բանաստեղծի զդայուն սիրող սիրով՝
բիրա մարդիկ պատճառել են նրան ահավոր մի ցավ։
Դա յերեսում ե պոետի արձակած բարձր ճիշերից։ Յե-
թե յերկու խոսքով բնորչելու լինենք խահակյանի յե-
րիտասարդական շրջանի սիրո յերգերի եյությունը,
պիտի ասենք, վոր դա մերժված, զոռով խլված սիրո,
ցավի ու մորմոքի յերզն ե, վոր բազմապիսի տարբե-
րակներով ե՛ հնչում նրա քնարի բեկ-բեկ լարերից։
Այս յերգերը, վորքան ել խահակյանի անձնական ան-
հաջող սիրո ապրումների արդասիք յերեան, այնու-
հանդերձ դրանց մեջ չի կարելի չտեսնել նաև սոցիա-
լական բողոքի ուժեղ չեշտեր՝ ուղղված «գուլում
աշխարհի» տերերի դեմ, վորոնք վողի և իշխանու-
թյան ուժով խլեցին, նվաճեցին բանաստեղծի սիրա-
ծին։ Բուրժուական աշխարհում «ամեն բան ծախվում
ե փողով»,*) հետեւապես ևսերը, նկատում ե բանաս-
տեղծը։ Հարուստների, կյանքի այդ բախտավորների
դեմ ե, վոր ատելությամք ել լցված խահակյանը։
Դրանք եյին, վոր զարկին, տարան պոետի սիրուհուն
և այժմ իրենց հաղթանակի հանդեսն են անում։

*) Ա. խահակյան, «Նրանք դրուչակ ունեն» 1932 թ. Փա-
րիզ, էջ 33.

Այսոր ձեր տուն մեծ խնջույք կա,
Դու կը բուրես վարդի պես。
Չորս բոլորքով հարուստ տղա,
Դու կը փայլես ասողի պես :

Ձեր տան առաջ՝ ձյուն ու գիշեր,
Ա՛խ, յես կանգնել կը դողամ.
Դու գահճի պես ա՛լ ես հաղել,—
Ալլդ չողքն ե իմ արյան...

Հարասելով զովհաննիսյանին, նկատենք այստեղ
այն, վոր իսահակյանի ակնարկած հարուստ տղի
ժպիտն ու ուրախությունը ծաղկել են իր (այսինքն
իսահակյանի, Հ. Պ.) և իր նմանների աղի արցուն-
քից : Մեկի յերջանկության ծառը բուսել ե մյուսի ա-
վերակներից, մեկի հագած ալ հանդերձը մյուսի ար-
յան չողքն ե : Այդ հուսահատ, ձեռնունայն մնացած
վիճակը բանաստեղծորեն այսպես ե արտահայտել
իսահակյանը .

Սիրաս, սիրուս թույլ կը զարկե,
Սեր ու յերգեր ել չկան..
Նոր եր ծրբել, — արև սիրեց,
Արե-աչեր ել չըկան :

Յերեկվա բովանդակ աշխարհն այսոր արդեն դա-
տարկ ե թվում բանաստեղծին, նրա անհաջող սիրուց
առաջացած «վերքի» «սև սպին», «սև ամպի պես»
սևացնում ե կենսատու արկի դեմքը : Իսահակյանի

դարբել լալ են սկսում բաղի բլբուլներն ու վաղորդյան
շողը, արցունքի պես թոն ե սկսում գալ աշնան պղտոր
ամպից : Յերկնքեց ընկնում են սիրո աստղերը : Պոետի
խեղդամահած արված սիրո դույժին են վայում բույերը,
կոնչում աղուավները և ի լրումն այս ամենի, ահա թե
ինչ ե տեղի ունենում բանաստեղծի հույզերի յերբեմ-
նի յեղեմ այլում չ:

Նման զայլերի խըմբին սամհեկի,
Զըմռան գիշերին վոռնում ե քամին .
Յեվ իմ պարտիզում, — մռա՛յլ, ամա՛յլ,
Խեղճ ուռիներիս ջարդում ե քամին :
Ա՛խ, մանկուց լացեց քո սերը, սի՛րտ իմ,
Վոչ վո՞ք չհասկավ յերազդ աղվոր .
Զո՞ւր մի՛ վորոնիր սիրտ իմ մտերիմ, —
Ծնվել ե հոգին հավերժ մենավոր :

Հանի՛ր քո սերը սըրտիցըդ ան ույս, —
Այդ խորթ, ապորեն զավակն աշխարհի .—
Զգի՛ր այս դաժա՞ն, մո՞ւթ գիշերին դո՞ւրս՝
ցուրտ քամու ըերան ... թող յերթա, սառի ...
Թո՞ղ լա, հեծեծա սերը՝ վորբ, ահմա՛յլ,
Յեվ քամին լացը նրա թո՞ղ տանի
Ալեկոծ ծովեր, անապատ մի՛ վայր, —
Սակայն մարդկանց մո՞ւ ... յերբեք չը տանի ...

Ինչո՞ւ պոետը յերբեք չի ուզում, վոր իր լաց ու կա-
կանը մարդկանց ականջին հասնի, չե՞ վոր մարդիկ

կարող կլինեն ոքնել նրան, ցըել վիշտը: Ամբողջ խընդիրն այն ե, վոր իսահակյանի «մարդ» հասկացողությունը՝ չի համընկնում Գորկու ասած ժամանակակից մարդակերպ մարդու հասկացողության հետ. (վոր մեծատառով ե գրվում և հպարտ ե հնչում): Իսահակյանի ասած մարդը, դայլ, մարդակեր մարդն ե՝ «զուլում աշխարհի» մարմնացումն ե: Դա այն մարդն ե, վոր, ինչպես տեսանք, զոռով խլեց պոետի ձեռքից նրա սիրած յարին, անխնայորեն ջարդեց նրա հույզի պարտեղում սիրո ընձյուղ արձակած նորարողով ուռիների ճյուղերը: Յերբեք մի լավ բան չսպասեր լով այդ մարդուց, պոետը վորեն հույս չի կապում նրա հետ: «Անիծվես մարդ, վոր հույսդ ե մարդ» ասում ե նա: Հասկանալի յե արդեն, թե ինչու բանաստեղծը չի ուզում վոր իր վիշտը տարվի մարդկանց մեջ և լսելի դառնա նրանց: Այս կերպ ե ահա հասարական, ընդհանրական դարձած վիշտը իսահակյանը տեղափոխում անձնական, անհատական ապրումներին շրջանակը, սիրային տառապանիների բնագավառը:



Իր ստեղծագործության հաջորդ շրջանում, արդեն հասունացած պոետը կամաց կամաց ոռմանտիկ սիրուց անցնում ե ավելի ուելին: Այս անգամ նրան սկսում են գերել կնոջ մարմնական թուլչանքները:

Հայնեյի նման ոռմանտիկ սեր յերգող, ավելի յերևակայությամբ, քան իրականով ապրող մեր պուետն սկսում ե արևելցի բանաստեղծներին մոտենալ:

Հաֆրդից կատարած իր մի թարգմանությունը իսահակյանը հայտարարում է.

Ճիմիկուց դեն ել չեմ ապրե
Առանց կին ու գինի...

Յել կինն ու գինին, աշխարհի այդ վայելքները,
Կլանում են նրան: Պոետը յերազում է կանացի չուր-
թերը.

Շուրթս վառվեց շրթներիուտ,
Աշխարհիս տերն եմ դառել.

Սակայն իսահակյանի ուեալ սերը շատ կարճ ե տեսում: Շուտով նա «մեղքի» յերգեր ե անվանում նման վողով զրած իր տաղերը: Բանաստեղծը հրաժարվում է կոնկրետ կնոջ մարմնական հաճույք-ները յերգելուց: «Բանաստեղծի յերազը» վուտանագորի մեջ՝ նա ցույց ե տալիս, թե ինչպես յերբեմն տենչալով կոնկրետ կնոջը, իր վսեմ յերազն այդ կերպ սպանվում և նյութ ե դառնում, «և մորպես նյութ պարիսկվում և պարտվում»*: Յել վորպեսզի նորից հնարավորություն ունենա ոռմանտիկ «յերկիցք դնացող» սեր յերգելու՝ իսահակյանը շտապում ե քայլել մեղքի յերգերը «զլջման» մեղեգիներով:

Այս կապակցությամբ բանաստեղծը նկատում է.

*) Տես՝ «Արեգ», 1922 թ. հունվարի 9-ի համարը:

Սերս կորցրի պատշուտ գրիի մեջ.
Ինչ վոր ունեյի, — և վսեմ, անդին,
Վողջը աղտոտվեց անհուն կրքի մեջ...
Բարձր լեռների արծիվը մեկ-մեկ
Ագահ ագւավից ցածր կթոնի...

Սակայն «բարձունքն յես դիտեմ, կըճախրեմ նորից» ասում ե բանաստեղծը ապաշխարողին հատուկ շեշտով: Վո՞րն ե և ուր և գտնվում իսահակյանի հոգին սրբագործող այդ բարձունքը, —

Զինջ ծովակի մեջ կա մի լուռ կղզի,
Մենավոր, անդորր ժայռեղեն մի գահէ
Ուր քաղցր ե հնչում դողանջը զանդի,
Յեվ փարվում մեղսուտ աշխարհի վրա:

Յեվ լուռ կղզու մեջ կա նվիրական
Հինավուրց քարայր, մի վեհ սրբավայր.
Այստեղ պիտ դնամ, լամ, քավեմ, վողբամ
Հոգիս մեղավոր և բաղմաչարչար:

Յեվ պիտի ծեծեմ կուրծքս քարերին,
Յեվ պիտի հեծեմ ցնորքս անրիծ,
Յեվ պիտի դանեմ սերը յերկնային,
Վոր հոգիս այրե և մաքրե նորից...

Այս կերպ ե ապաշխարում պոեմն իր դործած
«մեղերը» և ապա մինտում ե յերկնային սերը, վո-

րով սրբագործելու յե իր «մեղավոր և բաղմաչարչար» հոգին:

Բանաստեղծին արդարեւ հաջողվում ե գոնել յերկնային սերը, վոր հանդես ե գալիս բյուրեղ բարձունքի յերազական «հրաշք աղջկա» կերպարանքով, և վորին տիվ ու գիշեր կարոտաբաղձ ու թևատարած սպասում ե իսահակյանը:

Տ Զ

Յեվ տիվ, և գիշեր յես սպասում եմ,
Թե ահա կըդա կույսը ոյութական,
Վոր զարթնած հոգով յերգեմ վեհորեն
Յերազը չըքնաղ, մարդարեական...

Իր ուշ ու բեղուն աշունքին՝ փիլիսոփայական յերանդավորում տալով «յերկինք գնացող» ռոմանտիկ սիրո զգացմանը, պոետը հիրավի վեհորեն ե յերգում իր այդ «յերազը չքնաղ մարդաբեական»: Նրան հաջողվում ե «յերկնի ձեղուններից բարձրաբերձ» իր հավերժացող սիրո զգացումը փիլիսոփայական անվախճանության հասցնել:

Նույնիսկ, յերբ ժամանակն իր վախճանին հասնի, և արեն ել մի բուռ մոխիր դառնա, պոետի սերը վերըստին վախճան չի ունենալու (տե՛ս «Հավերժական սերը»): Թվում ե թե այլևս ավելին չի կարելի ասել սիրո հավերժացող և զորավոր զգացման մասին, բայց բանաստեղծն ավելի յե առաջ գնում, նրա համոզմամբ «սերը մարդուն պատիկ աստված ել կղարձնե»: Նկատենք այստեղ, վոր վոչ միայն պատիկ, այլ

և մեծ աստվածն ել մինչեւ հիմա վոյ մի մեռելի չի
փորձել հարություն տալ, իսկ սիրերվակ իսահակյա-
նի «Ուստա Կարո»-ի մեջ մեռելին հարություն և տա-
լիս նրա սիրո առարկան, վորի աչքերից կաթած ար-
տասունքները ծորելով մեռածի վերքի վրա,՝ կենդա-
նացնում են նրան: Այս բոլորով իսահակյանը մի բան
և ուղում ասելու աշխարհիս յերեսին չկա այլ զորեղ
բան, քան սերը: Այս համողումը հաղթահարում և
մահվան մղճավանդը, վոր ծնվել եր պոետի մեջ իր
գործունեյության տակավին վաղ շրջանում, և հար-
մար առիթներին իր սարսուսն եր զդացնում նրա յեր-
դերում:

Իսահակյանը իր բանաստեղծություններում ապ-
րել ու անցել ե սիրո զդացման բոլոր փուլերը: Տա-
կավին տարիներ առաջ, յերբ յերազող յերիտասարդ
եր պոետը, վաղ շրջանի Հայնելի նման յերգեց իր
«յերկինք զնացող» ոռմանտիկ սիրո յերգերը: Այսու-
հետեւ, բավական հասակ առնելով, նա հնչեցրեց նաև
մարմնական սիրո վայելքների յերգը: Փամանակ անց,
իսահակյանը զբելով իր զղժման մեղեքիները՝ հը-
րաժարվեց «յերիտասարդական շրջանում դործած
մեղքերից» և հանդես յեկավ վորպես ապաշխարող: Ա-
մենից վերջը, տարիք առած, ներհուն դարձած քնա-
րերզակը՝ փիլիսոփայական յերանդավորում տալով
սիրո զդացմանը՝ յերգեց «Հրաք աղջկա» հակերժա-
կան սերը իր համանուն հղացման, այլ և «Լիլիթ» ու
«Բանաստեղծի յերազը» գործերի մեջ: Այս կերպ և
իսահակյանը բոլորում իր սիրո յերկների վոսկեւ շրջ-
թան:



Իսահակյանի սիրո յերգերը, ինչպես տեսանք,
ընդհանուր առմամբ մորմոքով առցուն հղացումներ
ելին, վորովհետև նրա սերը մնացել եր անարձագանք՝
«ձայն բարբառ յանապատի»: Այդ գրության մեջ նա
ավելի քան յերեսե կարիք եր զդում իր ցավին ճար
անող, վշտերն ամոքող մի սրտացավ մտերիմի: Ըն-
կերն այդպիսին չի, «սրտացավ ընկեր չկա», — ասում
է բանաստեղծը: Ուրիշներն ել անտարբեր են մնում
նրա անլուկը տառապանքներին: Ո՞ւմ դիմել ուրեմն,
ո՞վ կարող եր սրտանց ցավակցել իրեն: Նրա «գազա-
զած սրտի» վերջին հանդրվանը մոր գիրկն ե: Յեկ
ահա յերկար թափառած, անհաջող սիրուց «քոլ ու չոլ»
ընկած «ղաղարդյուն աշուղը», հաստատ քայլերով
դիմում և մոր գորովալի գիրկը, համոզված, վոր
այնտեղ կգտնի իր հանգիստն ու վերքերի ամոքումը:
Մայրն ե, վոր մեղմում և պոետի ծայրահեղ հուսա-
լքությունը: «Վերջ-յերգ» խորագիրը կրող մի վոտա-
նավորի մեջ բանաստեղծն այսպիսի խոսքերով և դի-
մում իր մորը.

Ծեգը առավ դար ու դուրան,
— Աղիկ մերիկ, դուռը բա՛ց,
Քու վորդին եմ, խոցված կուլամ,
Անո՛ւշ մերիկ, դիրկդ բա՛ց...

Մենք արդեն խոսում ենք իսահակյանի մորը նը-
վիրած սիրո յերգերի մասին: Այս բաժնում նրա

զգացումները կարնամակայի հեղեղի ուժ ունեն : Բա-
նաստեղծը հիրավի դրել ե իր հոգին այլ յերգե-
րում : Մեր գրականության պատմության մեջ դժվար
ե գտնել մի այլ ստեղծագործող, վոր այս բաժնում
դերազանցի իսահակյանին ; Ճիշտ ե , թվականցին,
Աղայանը, Տերյանը ամենայն անկեղծությամբ ու
հուզականությամբ են յերգել մոր կարուը, բայց ի-
սահակյանի... «գիրը ուրիշ զբեն ե» : Այս ել ա-
սենք, վոր իսահակյանը հիշյալ պոետների նման մի
անդամ չե , վոր յերգել ե մորը, գեղելով իր
հեղեղ զգացմունքները : Մորը՝ սիրասուն Ալմաստի*)
կարուը իր աչքերի մեջ մշտապես պահած է ունեցել
բանաստեղծը : Նրա այս յերգերի թիվը քանակով ել
դերազանց ե , մի հանդամանք, վոր նորյանկես ապա-
ցուցում ե մեր ասածը :

Իր անլուր տառապանքներին պոետը հաղորդակից
ե դարձնում սոսկ մորը, վորովհետև միայն նրան հն
հայտնի իր վշտատոչոր վորդու վերքերը .

Բանաստեղծի «Քարդին դարման , յարին մահլամ»
անողը նրա (մեծատառով դրված) Մայրն ե :

Պետք ե ասել, վոր մոր և վորդու սերը վորխա-
դարձ ե : Տարիներ չարունակ իր անձը տարադրու-
թյան մեջ մաշող պոետի համար մայրը, ինչպես ա-
սում են՝ «աչքից հեռացված , սրտից մոռացված»

*) Իր 1903 թվի բանաստեղծությունների ժողովածուն
իսահակյանը նվիրել ե մորը, այսպիսի մակարսությամբ՝
«Անդին մորս՝ Ալմաստ իսահակյանին նվիրում եմ բանաստեղ-
ծություններս» :

Եյակ չեր : Բանաստեղծը քանիցս դիմելով իր և մոր
մեջ իրը թե կապ պահող սարից յեկող «նշխուն հավ-
քերին», այսպիսի կարուտադին հարցմունք ե անում .

Սարեն կուրզաք, նշխուն հավքե՛ր,
Ա՛խ , իմ մորըս տեսել չե՞ք :

Պատասխան չստանալով իրենց չուն շարունակու
անտարբեր հավքերից , պոետի սրտի մորմոքը սաստ-
կանում ե ուժգնատես .

Հավք ու հովեր յեկան կըտիս
Անձեն դիպան ու անցան ,—
Պապակ-սըրտիս , փափաք-սըրտիս
Անխոս դիպան ու անցան*) :

Մայրը ևս իր հերթին սարեն յեկող «Վորսկան
աղբարնեւ» նման հարցումներ անում , ծանոթ «Դարդի
ձեռից սարեն ընկած» իր բալից լուր առնելու նպա-
տակով : Հանրահայտ վոտանալորի հուղիչ վախճա-
նը վորսկան աղբոր տված այս պատասխանն ե .

—«Տեսա , քույրի՛կ դարդոտ բալեդ ,
Քարըն ե դրել բարձի տեղ ,
Անուշ քընով տաք դընդակն ե
Կըրծքում դըրկեր յարի տեղ :

) Այս և «Եվկր մայրեկիս» խորագրով բանաստեղծու-
թյունը 1903-1908-ը և 1930 թ. հրատարակություններում յեն-
թարկվել ե վորոշ վոփոխման :

Սարի մարմանդ հովն և շոյում
Ճակտի փունջը մարալիու,
Ծաղիկներն են վրան սղում,
Ազիզ բալիու, խեղճ Լալիդ»*) ...

Մորը նվիրած իր մի այլ յիշգի մեջ (գրված 1898թ.), վոր Խսահակյանի բանտարկության պատմության հետ կապված ինքնակենսադրական տարրեր ունի, վերստին յերեան և դալիս դեպի իր սիրասուն չափակն ունեցած մոր սրտացավանքը։ Հղացման շարժառիթն այս եւ — բանտից աղաստ արձակված և տուն վերադարձած մեր սրտին մայրը պատմում է իր հոգեվիճակը նրա բանտարկության ընթացքում։ Կանաչ գարունքին, յերբ արեվերես են յելած լինում կանաչները, նա պատմում ե, թե ինչպես սրտի թառանչով միշտ ասելին է յեղել «Ախ, կանաչեր, գուք արեերես յելաք, յարաք բալես յե՞րբ կենի բանդեն»... այդ հուզիչ պատմության տպավորության սակ Խսահակյանը դրել է իր «Կոռունկները շարանշարան» բանաստեղծությունը, վորի բնաբանն ել դարձել ե մոր հիշյալ խոսքերը*)։ Այսի պես անկաշառ ու անմոռանալի յե մոր սերը, այդ բանը շատ անդամ ցույց է տվել Խսահակյանն իր հղացումներում և հակադրել կողը, ընկերոջ վաղանցուկ ու խաբուսիկ սիրո դղացումներին։ Յերկար

*) Այս բանաստեղծությունը տարբեր հրատարակությունում յենթարկվել է վորոշ փոփոխությունների։

*) Այդ մասին մեզ հայտնեց ինքը՝ Ավետիք Խսահակյանը։

տարիներ ոտարության մեջ յեղած բանաստեղծը, յերբ մի որ վերագառնում է հայրենիք՝ «Այսնքի բնուով մեջը ծռած», հայրենի գյուղի հանդում պատահում է իր վաղեմի ընկերին ու յարին, կարոտով մոտեն իւրակե վարկելու ընկերը և վոչ յարը, նում ե նրանց, և իւրակե վոչ ընկերը և վոչ յարը, չնայած իր կանխալ արած հիշեցման, չեն ուզում նրան ճանաչել։

Ախը յես չա՛տ փոխվեր եյի...

Գառն հեղնանքով ասում է բանաստեղծը։ Բայց յերբ մայրն է տեսնում դարիր բալին՝ վոչ միայն ճանաչում, այլ և անզուսպ կարոտի ճիչ և արձակում ու փարվում վորդու վզին։

«Ա՛խ, բալա՛ ջան, դարիր բալա՛, իդ դո՞ւն ես...»

Ահա այն անդունդը, վոր սահմանագծում է բարնաստեղծը ընկերով, կնոջ և Մոր միջև։ Այս կանաչակերպ չի կարելի չհիշել նեկոսովի «Մայրը» պակցությամբ չի կարելի չհիշել նեկոսովի «Մայրը» պատարագիրը կը ող վոտանակորը, վորտեղ, (թեև համեխորագիրը կը ող վոտանակորը, վորտեղ, (թեև համեմատաբար սակայ հուզականությամբ), նույն տարբեմատաբար սակայ հուզականությամբ), նույն տարբեմատաբար սակայ հուզականությամբ), կնոջ և մոր սիրո մեջ։ րությունն է դրվում ընկերով, կնոջ և մոր սիրո մեջ։

Լոելով կովի արհավիքների,
Ամեն մի ընկած նոր զոհի մասին,
Եես չեմ ափսոսում կնոջ, ընկերին,
Եեվ վոչ ել նույնիսկ իրեն հերոսին...»

Կմխիթարվի, ո՛, կինը մի որ,
Ընկերն ընկերին կանի մտահան;
Բայց մի հոգի կա մի տեղ սպալոր
Նա հիշելու յե մինչև դերեզման*):

Նեկրասովի ասած այդ մի հոգին մայրն ե, վոր
յերեք չի մոռանալու իր ընկած վորդուն:

Ինչպես ասինք վերեւում, Իսահակյանը մենակ
իր մորը չե վոր յերդել ե. նրա յերդը նաև հանուր
մայրերին ե ուղղված: «Այդ ծովի չափ մեծ սերը»
դեպի այլ մայրերը՝ բանաստեղծի մեջ սերմանել ե իր
ծնողը (մայրը), «դու լրիր իմ մեջ» այս զդացմուն-
քը, հայտարարում ե հուման հոգու տեր Իսահակյա-
նը: Յեկ վորպես ապացուց այդ բանի՝ բանաստեղծը
բերում ե հայրենի «ոչախի քով» թոռնիկը զրկին
նստած, իր վորդու համար աղոթք մրժնջող մոր այս
խոսքերը, վոր լիապես դըսերում ե նրա այդ հու-
մանիզմը.

Կը տեսնեմ ահա,— լուռ յերեկոյին
Բարակ ծուխ կենի իմ հոր ոճախեն.
Յեկ ուռիներս մարմանդ կորորվին,
Ծղրիդը կերպե անտես խորշերեն...

Մեղմ ճրագի տակ նստել ե տխուր,
Ծերունի մայրս՝ մանկիկս զրկին,—
Մուշ-մուշ քնի ե մանկիկս անոռը.
Ու աղոթք կանե մայրիկս՝ յոին...—

*) Թարգմանությունը Հովհաննես Թումանյանին ե:

«Ամենեն առաջ թո'զ ինքը հասնի,
Ամեն հիվանդի, հեռու ճամբորդի:
Ամենեն հետո թո'զ ինքը հասնի,
Քե'զ, իմ խեղճ վորդի', իմ պանդուխտ
վորդի»:

Իսահակյանն այստեղ բարձր մարդասիրության
զալախարն ե արտահայտել: Սեփական, նեղ յեսի
շահերը ստորագալաված են հանուրի շահերին. դա
անձնազոհության այն վսեմ ու բարձր որինակն ե,
վորով այրվում, և բանաստեղծի հոգին: Այս նույն
վորով իսահակյանը դրել ե մի շարք բանաստեղծու-
թյուններ (տե՛ս. «Յերազ տեսա վոր մայրս թշվառ»,
«Ի՞նչ ես լալիս, անդին ընկեր» և այլն) վորոնց մեջ
իսկապես յերեան ե դալիս Իսահակյանի մեծ ձկտու-
մը «Պետի սիրո, հումանիզմի, բարության բարձր
վոլորտները, գեղի իտեալը, կատարյալը»): Մորը
նվիրած յերգերի այս բաժինն ավարտվում, սինթեղ-
վում ե «Մոր սիրալը»**): Հանրածանոթ իսկապես բա-
ցառիկ ու հուղիչ բանաստեղծությամբ, ուր իսա-
հակյանն իր կախարդական զրչով նորից ու նորից
վեր ե հանում մոր դեպի իր վորդին տածած անսահ-
ման սերը:

*) Տես «Գրական թերթ», 1937 թ. № 12: Իսահակյանի
հումանիզմը դրսեռվել ե նրա մի շարք արձակ գըրվածքնե-
րումն ել, «Ուշանառ»-ում և այլուր:

**) Իսահակյանը հայկական այս ավանդավեպը մշակել ե
յերկու վարդանով, մեկը հիշյալ վերագիրն ե կրում, մյու-
լս՝ «Խեղճ Մայրը»:

Իսահակյանի քնարական բանաստեղծությունների
մեջ սիրո մոտիվների հետ տեղ էն գտել նաև բնու-
թյան յերգերը: Ճիշտ ե ասված, վոր առանց բնու-
թյան (ինչպես և սիրո) չկա վոչ մի զորեղ քնարեր-
դություն:

Իսահակյանն իր աչքը բաց ե արել ու տեսել Կ
իրեն մեր յերկրի հարուստ բնության զրկում: Նա
լւսն միշտ և ամենուրեք սրտով ու եյությամբ ըդ-
դացել ե հայրենի բնության մեջ.

Իմ սիրով այնտեղ ե, ուր բարձրադմբեթ
լեռներն են իշխում, այն յերկրի վրա,
Ռուր յեղնիկները սրծիվների հետ անդունդից-անդունդ
թուզում են անահ:

Ինչպես անառիկ Լոռին Թումանյանի զրչի
տակ կենդանագրվում ե իր օանդնդախոր ձո-
րերով, նոթերը կիրած մոռամ ժայռերով», այնպես ել
Արագածն ու Մանթաշը Իսահակյանի արարչական
զրչից են կյանք առնում: Թումանյանի մասին խո-
սելիս՝ Իսահակյանն ասելու, թե նա իրեն բաղմապատ-
կը ված եր դղում կուվա բնաշնարհում: Ճիշտ այդ-
պես ե զգում իրեն Իսահակյանը Մանթաշում, վոր իր
պատճառն ե: Պոետն իր մի վուանավորում ասում է,
թե Մանթաշին, քառակառաթ Արագածին մեր բանձ-
րիկ յերկրի այդ հիասքանչ զմբուխու գուհին.

—Յե՞րբեք յերբեք մահ չկա'...

Մենք կասելինք իսահակյանի այդ զմբուխու
յերդերին ել յերեք մահ չկա, վորովհետև ուրանց
մեջ նա ճշմարտապես ապրեցրել և թե՛ Ալաղյաղը,
թե՛ Արփաշյալ և թե՛ արևաշտ Շիրակը իրենց համբ
ու թռչուններով:

Զառ Մանթաշի թե ու թուչունք
իմ բլրութեն ձեն կառնին,

Ճշմարտապես նկատում ե բանաստեղծը: Ման-
թաշի, Ալաղյաղի բարձունքներին, այդ հոգեթով
հիասքանչ դահերումն ե ցանկանում պոետը վոչ մի-
այն ապրել ու յերեկ, այլև դադար առնել.

Յես վոր մեռնիմ՝ ինձ կթաղեք
Ալաղյաղի լանջերում.
Վոր Մանթաշից հովերը դան,
Վրաս հեան ու յերթան:

Յեւ յերկար ժամանակ Իսահակյանն ապրել ե
արդյունաբերական վեթնաբարի քաղաքներում (Բեռլին,
Փարիզ, Վարչավա, Պոլիս, Հռոմ, Լայպցիգ, Վիեննա
և այլուր), սակայն քաղաքաբնակ մարդու հոգեբանու-
թյունը գրեթե չի զգացվում նրա բանաստեղծու-
թյուններում: «Ենթ վուղոցների բավիզներն ու մայ-
թյուններում: Ենթ վուղոցների բավիզներն ու մայ-
թյունների քարերը», վոր այնքան հարազատ են յեղել
Եերի քարերը», վոր այնքան հարազատ են յեղել
Տերյանին, վանիչ տրամադրություններ են առաջ
բերել Իսահակյանի մեջ: Յեկ ընդհակառակը, նրա
վողեշնչման ազդակներն են յեղել դյուղաշխարհի

պատկերները՝ հարոսներ, սինամ հավքեր, սլացիկ՝
սոսիներ, ցորենի ճոճուն արտեր, բոստան, մաճ, ա-
րոր, բայց յերբեք գործարանների յերկինք քերող
ծխնելույզներն ու սալահատակված փողոցները:

Վաթանի՝ դյուլաշխարհի հրապույր պատճառող
բնության գեղեցկություններն եյին, վոր աչքերի մի-
ջով լցվում եյին բանաստեղծի հոդին: Այդ բնությու-
նըն ե, վոր նա վոչ թե նկարագրում, այլ ճշմարտա-
պես ապրում ե: Այսպես որինակ՝ սար ու ձոր իսա-
հակյանի գրչի տակ դիտեն մուշ-մուշ քնել. յերր
վրա յե հասնում գիշերը.

— «Կոպերն իջան լուռ գիշերվա,
Սարին, ձորին բերին քուն.

Մեկ ուրիշ տեղ բանաստեղծը լուսնի զբոսանքն
ե նկարագրում.

Յերկինքն՝ անամպ, անուշ լույսին,
Աստղերի մեջ ման կուղա.

Արևն ել մարդու նման դիտե իր «Հող-մատները
իւաղացնել»: Վերջապես իրենց ծարագը Ջրով հագեց-
նել դիտեն և ամպերը.

Ամպերն ընկան ծովի վրեն
Հաղար բերնով ջուր խմին:

Կարելի յե այսպես յերկարացնել մեջ բերումների
շղթան և ցույց տալ, վոր իսահակյանն իսկապես բը-

նության իր նկարադրությունների մեջ կենդանու-
թյուն, դինամիզմ և մացնում:

Նկատենք և այն, վոր նրա մոտ բնությունը՝
վլորպես առանձին ամբողջական պեյզաժ իր իսկ հա-
մար հանդես չի գալիս, այլ պոետի այս կամ այն
տրամադրության արտահայտությունն ե դառնում:
Յերբեմն բանաստեղծը տոգորում ե լնությունն իր
վշտերով (տե՛ս «Դարդս լացեք սարի սմբուլ» վոտա-
նավորը), յերբեմն հակադիր վիճակներ ե ստեղծում
իր ներաշխարհի և բնության տեսարանների մեջ՝
«Ես ինչ կարմիր վառ արև ե, սիրս մութն ե քանց
գիշեր», յերբեմն գեղեցիկ կերպով համադրում իր
հոգեկան բարձր տրամադրությունը բնության ուրախ
տեսարանի հետ (տե՛ս. «Յերկինքն անամպ ուրախ
լուսին» յերդը): Ծոմանտիկներին հատուկ յեղա-
նակներով վոգեչնչելով բնությունը, իսահակյանն իր
յեսին ե ծառայեցնում այն, մի հանգամանք, վոր
նրա ինդիվիդուալիզմն ու սուբյեկտիվիտական լե-
րիկան ե հատկորոշում: Ի հակադրություն իսահակ-
յանի՝ թումանյանի մոտ բնությունը վոչ թե առաջին
հերթին հեղինակի ներաշխարհի, այլ նրա ստեղծա-
գործությունների մեջ ապրող քաջքերի, լեզենդական
հերոսների ու դեվերի մարմնացումն ե: Այսպես ուրե-
մըն, վորպես լիրիկ բանաստեղծ՝ իսահակյանը
բնությունն արժեքավորում ե իր վրա գործած տապա-
վորության չափով, հակառակ թումանյանի, վորի հա-
մար բնությունը վոչ թե իր անմիջական հոգու թարգ-
մանի դերումն ե հանդես գալիս, այլ նրա հերոսնե-

րի*): Իսկ յերբ Իսահակյանը վորձում և փիլիսոփատցական աչքով նայել բնությանը, հանգում և պանթեիզմին, բնաստվածության պաշտամունքին:



Իսահակյանի յերգած մոտիվների մեջ չի կարելի դանց առնել «իր վոսկի ամպի պես անցած», առհավետ անվերադառնալի մանկությունը, պատանեկությունը. «Ճահել հպարտ հասակի»-ն նվիրված յերգերը.

Ե՛յ, դու, ջահե՛լ, հպա՛րտ հասակ,
Անցար վոսկի ամպի պես.
Քեզ հետ տարար յերգեր ու սեր,
Տարար դարունն իմ՝ սրտես:
Քար կըսեղմեմ սրտիս հիմա.
Կելնեմ սարերը լալու, —

Զգացմունքների գերիշխանության պահին Են ասլած այս խոսքերը, վոր սակայն պետք և տեղի տան գիտակցությանը, և այն ժամանակ բանաստեղծը կասի.

Ա՛խ, լաց ինչքան, ինչքան կուզես,
Անցածն ել յետ չի դալու...

*) Մեր խոսքը վերաբերվում է Թումանյանի վոչ քնարական բանաստեղծություններին:

Իսահակյանի յերգերի այս բաժինը ևս սինթեղում և մի հղացմամբ, դա «Ապրած իմ կյանքից» վուտանավորն ե, ուր բանաստեղծն իր անհատականության բոցե կնիքն և դրել, տարբերվելով բոլոր այն գըղոններից վորոնք նույնպես յերգել կամ բնորոշել են մանկությունը, հաճախ իրար շատ նըսման, շարլոն ձեռվ: Իսահակյանը, կը կնում ենք, յուրովի յէ բնորոշել իր ապրած կյանքի մանկության յերադ որերը, —

Ապրած իմ կյանքից
Մի սուրբ յերազի
Բուրմունքը մնաց
Սրտումս անմոռաց —

Կյն վոր՝ ջերմ լացի
Առանց տանջանքի,
Խորոնկ սիրեցի
Առանց տենչանքի... .

Իսկառես մանուկը սրտանց, շատ ջերմ և լաց լինում, բայց վորովհետեւ նրա լացը մեծ տանջանք չի պատճառում, ուստի շատ չուտ ել արցունքը կարող է ծիծաղի փոխվել: Մանկան հոգերանության յերկրորդ բնորոշնորոշ հատկանիշն և ջերմորեն սիրելը-սեր, վոր չի զարթեցնում նրա մեջ տենչանք, այլ և պատճառը, վոր այսոր վորեւ մեկին՝ խորապես սիրող մանուկը՝ վաղը կարող և հեշտությամբ մոռանալ: Մանկան հոգերանությունն այդպես ե, ինչպես բնո-

լոշել ե պոետը, ջերմ կուլա առանց տանջանքի, լուրունկ կսիրի առանց տենչանքի:

Մանկության և պատանեկության մասին դրած վերոհիշյալ բանաստեղծությունների հետ մեկտեղ ուշադրության արժանի յեն նաև խսահակյանի այն յերգերը, ուր պոետը ցուցաբերել է նաև իր մի այլ հատկությունը, այն ե՝ կարենալ մտնել ուրիշի եյության մեջ, զգալ նրա զգացմունքներն ու ապրումները, և լինել դրանց թարգմանը: Իր «Բալես ունի հնդու մաթա», ինչպես և «Սև միջարս» վոտանավորի մեջ խաճակյանը կարողացել է ցուցաբերել իր այդ, յեթե կարելի յե ասել, «մայրանալ» կարենալու հատկությունը: Բանաստեղծը կարողանում է հարազատորեն վերաբռագրել այն դորովն ու խանդադատանքը, վորով համակված ե մայրն իր յերեխային խաղացնելիս: Հիշյալ բանաստեղծության բովանդակությանը հարմար ե այն թեթև, ծափ տվող խաղակուն չափը, վորով հորինված ե վոտանավորը: Այդ չափը յերդը դարձնում ե աշխույժ, դյուրընթեռնելի: ընտրքի համապատասխան բառերը կտրծելք թոթովախոս մանկան լեզուիկոնից առնված լինեն: Այս ամենը այնքան վարակիչ ե դարձնում յերդը, վոր մի անգամ, յերբ սկսում ես կարդալ, այնուհետև ծանոթ հին յեղանակի նման միշտ մտքումդ կրկնել ես ուղում:

Բալես ունի հնդու մաթա
Վոսկի որոցք, ատլաս ծածկոց,
Պուլուշ դարդար, նշխուն բալա,
Պաճիկ կենես... որ, որ, լա լա:

Պոետի այս փաղաքուշ յերդը, վոր այնքան կենախսինդ ու լի ուրախությամբ եր հնչում հայ գեղջուկ մոր բերանից, տեսեք թե ինչպես ե փոխվում, յերբ չար թշնամու հուրն ու սուրն ե փայլատակում նրա զլսին: Այդ յեղեռնից ազատվելու ու իր մանկանըն ազատելու համար սարերը փախչող ու այնտեղ ապաստան զտնող զաղթական դարձած մոր որոշոցի յերդն այս անդամ փոխվում ե այսպիսի լալահառաչնվագի.

Սև միդարս ձոճք եմ արեր,
ձոճք եմ կապեր ծառերեն.
Լալեն, լալեն քուն ե մըտեր
իմ վորի բալեն, իմ լալեն:
Նանքի երա՛, նանի դար դար,
Դարդեր ունիմ, քանց ծով ու սար:

Զար թըշնամու հըրեն, թըրեն
Փախած, ընկած սար ու քար.
Քեզի հար լուռ սըրտիս վըրեն
Գըրկած լացի սար ու քար:
Ո՛ր որ, բալաս, ո՛ր ո՛ր, նանի,
Քամբախտ մերդ չարդ տանի:

Քավության նոխազ դարձած հայ դաղթական մոլորոցի անզուգական յերդն է սա, տրված այնքան ռեալիստորեն, վոր թվում է թե վոչ թե իսահակյանը, այլ հենց ինքը, դաղթական մայրն է այդ յերդը հորինողը:

Իսահակյանի քնարը նրա գրական գործունեյության համեմատարար հասուն շրջանում արձագանքել է հասարակական-քաղաքական կյանքի մի չափ յերկույթներին ևս՝ տալով նրանց յուրովի մեկնարանությունը։ Այդ ինդիբներից են պլիսավորաբար աշխարհում գոյություն ունեցող սոցիալական անարդարությունների վերացումն ու ազատ հայրենիքի պահպատճեր, վոր գերել և պոետին, ինչպես ինքն է առում, տակավին պատանի հասակից։ Այնելով նրա մտահոգության մշտական առարկան։ «Պատանի հասակիցս ինձ մշտապես հուզել ե, մտալիկել և աշխարհիս մեջ գոյություն ունեցող չարիքը-աղքատությունը, տղիտությունը, բռնությունը, շահագործումը, վոճիրները։ Ինձ տանջել ե հայ սաշխատավոր ժողովրդի դառը վիճակը՝ սուլթանի և ցարի դաշտան լուծերի տակ, և այդ շարիքները վերացնելու դորձը, փրկության միջոցները»^{*)}։

Սրանից յերկու տարի առաջ ասված հիշյալ խոսքերը իսկապես պատանի հասակից իսահակյանի

մշտական մտալիկության առարկան են յեղել։ Յեկի ի՞նչպես կարող եր խեղճի դատի ակնհայտ պաշտպան իսահակյանի նման պոետը մշտական մտահոգության առարկա չդարձնել «ավեր ու ավար» դարձած իր վաթանի, և

Հրին, Ջրին
Ու սրին կուր

գնացած հայ աշխատավոր ժողովրդի դառն վիճակը։ Բանաստեղծի հոգին թունդ և առնում, յերբ լուսում է 1918-20 թ. թ. տեղի ունեցող կոտորածների մասին։ Ի՞նչ եր մնում յերգել նրան, յեթե վոչ

Կակի՛ծ, կակի՛ծ...

Մեր բովանդակ ժողովրդի ընդհանրական դարձած վերքերն ու կըսկիծն եր դա, վոր իր անձնականը համարելով յերգում եր իսահակյանը։ Ուստի ե՛լ ամելի յե մեծանում նրա քնարի հասարակական նշանակությունը։ Նրան համազգացողների թիվը դառնում եր բազմապատիկ։ Պոետի դորձերը կարդում եր մեր բովանդակ ժողովուրդը, վորի Փիզիկական վոչընչացման վողբն եր յերգում նա։ Իսահակյանը սըրտում եր հայ գեղջուկի որհասական վիճակը, յերբ նրա արտերը հասկարել ելին արվել թշնամու սրով, մնացել եյին խոպան, ամայի, ակոսների մեջ բռնակալը մորթել եր մաճկալին, անխոնջ ամոլին։

Պատուհասվող գեղջուկի վշտից եր, վոր փըղձ-

*) «Գրական թերթ» 1937 թ. № 12

կում եր բանաստեղծի մեծ սիրտը և առատ աղբյուրով խփում նրա քնարական յերգը.

Հայոց գեղջուկի ծավալուն արտե՛ր,
Ավետարանի եջերի նման
Խնկաբո՛ւյը, ոծուն հավե՛րժ սրբազան,
Թշնամու սրով հասկաբեկ արտե՛ր:

Խոպան մնացիք՝ անտեր, ամայի,
Ակոսներիդ մեջ մորթեց մաշկալին,
Մանուկ հոտաղին, անխոնչ ամուխն
Դարերի դժխեմ վոսոխն ամեհի:

Նույն յերդի հաջորդ տողերում հայ գեղջուկին «մեռնող ցորենի անմահ սերմեր»-ի հետ համեմատելով, բանաստեղծը աննկուն հավատք ե հայունում, վոր շուտով այդ «անմեռ ցորենի» հատիկների պես բազմապատկերու յեն հայոց գեղջուկները և նրանց համար բացվելու յե աղատության վոսկի արշալույթը. —

Հայոց պեղջուկնե՛ր, յեղբայրնե՛ր Հողուտ.
Զեր արյունազանդ արտերի վըա
Դրախտի փառքով պիտի հուրիսա
Մեր ազատության վոսկի արշալույթ.

Այս հավատքով համակված իսահակյանը, ինչպես կտեսնենք, իր հետագա բանաստեղծություններում, էուչ և անոնմ ժողովրդական մասսաներին թոթափել

բանակալների ստրկացնող լուծը: Նման մոտիվներն ակնառու տեղ են դտել իսահակյանի լավ իմաստով հայրենասիրական յերդերի բաժնում, և իսկապես միթե ֆեոդալական սուլթանական Թյուրքիայի և ցարական իմպերիալիստական Ռուսաստանի կրկնակի լծի տակ հեծող, ազատություն տենչացող մեզ հանձարեղ, բայց խոչտանգված, հաղար անդամ լլկված ժողովրդի, նրա զարկված ու զրկված հայրենիքի վիճակի վողը չե՞ն նաև «Հե՛յ ջան հայրենիք, ի՞նչքան սիրուն ես», հիրավի սիրուն այս բանաստեղծությունը.

Հե՛յ, ջան—հայրենիք, ի՞նչքան սիրուն ես,
Սարերը կորած յերկնի մովի մեջ.
Զրերը անուշ հովերը անուշ,
Մենակ բալեքը արուն—ծովի մեջ,

Բանաստեղծը մի կողմից «աղիկ հայրենիքի» բռնական գեղեցկություններն ե պատկերում, մյուս կողմից այդ հայրենիքի արուն—ծովի մեջ գտնվող բալեֆի հակադիր վիճակն ե ներկայացնում, իսկ ամենից վերջում այնքան անձկությամբ մի բան ե միայն տենչում՝ տեսնել փրկության առաջատակ կարու «աղիկ հայրենիքի» աղատությունը, նրա «նոր որվածեղը», վորպեսպի «արտուտի պես» վեր ու վեր ճախրելով՝ լիաթոք «բարձր ու զիլ» յերդի նրա «կանաչ արևը»: Իսահակյանի տակավին 32–33 տարի առաջ գրած թե՛ «Հե՛յ ջան հայրենիք» բանաստեղծության մեջ, և թե՛ դրական մի այլ ժանրի գործում՝ «Գաւրիբարիականը» վերնագրով պատմվածքում, ու այդ

վողով գրված նրա բովանդակ հղացումներում դժվար չետեսնել իսահակյանի ազգային աղաստագրական շարժման գաղափարներով՝ կրակված լինելու հանդամանքը, մի բան, վոր բնորոշ է նրա աշխարհայցքի դեմոկրատական վոդուն, և կենդանի ապացույց այն բանի, վոր իսկապես իսահակյանին, ինչպես ինքն և սուռմ, «տանջել ե հայ աշխատավոր ժողովրդի դառն վիճակը՝ սուլթանի և ցարի դաժան յուծերի տակ»*) և վոր բովանդակ ժողովրդի ազգային աղաստագրման Համար իրախուսելի որինակ և համարել «Քարիբալ-էու» շարժումը: Սոցիալական հաղեցվածություն ունի անշուշտ իսահակյանի քնարը (թեև վոմանք համամիտ չեն*):

Նա քանիցս ամբողջ թափով ծառս ե յեղել թե՝ իմպերիալիստական նկրտումներով բոնված Փեղաւլական թյուրքիայի և ցարական Ռուսաստանի, և թե՛ բուրժուական «արունքակեր», զուլում աշխարհի դեմ, ուր անաշխատներն ու պորտարույժները շահագործման վայրագ միջոցներով դրկել են «քարիբ-հողից» հաց քամողներին, և փոխարենն իրենք վայելել «աշխարհի ճոխ սեղանից»: Տեսնելով իր հարազատ հանրային հատվածի «դառը դատած» ու դադարի նըստած վիճակը, բանաստեղծը բողոքի ձայն ե բարձրացնում տիրող սոցիալական անարդարության, անհավասարության դեմ:

*) Տե՛ս «Գրական թերթ», 1937 թ. № 12

**) Տե՛ս «Մուրճ», 104 թ. № 3 ԱԼ. Թուբենի հոդվածը:

Հարուստ մարդիկ կուտեն խմեն Աշխարհի ճոխ սեղանից: Մենք աշխարհի խորթ տըղելքն ենք, Մեզ փայ չըկա աշխարհից:

Իեղծ աղքատի հողին դուրս դա, Քարից-հողից հաց քամե. Բեռով հացը հարցատին տա — Հարուստն իշխե, վայելե:

Իեղծ աղքատը դառը դատի, — Դատարկ նսաի... ե՛յ աշխարհ, Ել ինչո՞ւ յես քարը թողնում Քարի վրա, քար աշխարհ:

Դուսական առաջին հեղափոխության նախորեյին (1901 թ.) զրված իսահակյանի այս հղացումը բողոքեր ուղղված առ աստված, այլ սոցիալապես հաղեցված յելույթ՝ «դիշակեր բուրժուազիյի»*) ստեղծած կարգ ու սարքի դեմ: Սոցիալական հաղեցվածությունն ու դասակարգային պայքարի արտահայտությունները, թեև յուրովի, բայց դնալով տվելի սուր կերպարանք ու արտահայտություն են ստանում մեր պոետի 1906 և հետագա տարիներում հեղափոխության աղդեցության տակ դրված բանաստեղծությունների և արձակ գործերի մեջ, ուր այլևս սոսկ տըրտունջներ, դժգոհություններ ու դանդատներ չեն;

*) Իսահակյանի արտահայտությունն ե:

վոր լսվում են խեղճ աղքատի շահերից խօսող դեմոկրատ բանաստեղծի քնարի լարերից: Շահագործող դասակարգի անարդ, ստրկացնող լուծն իր ուսերից թոթափելու կոչ և արձակում այսեղ բանաստեղծը աշխատավոր դասակարգին:

Յե՛լ աշխատավոր, ստրուկ ժողովուրդ,
Յե՛լ լուծէ քցիր, յեղիր ինքնիշխան.
Քրտինքիդ տերը մենակ դու յեղիր,
Մեկեն կկորչեն աղա, խան, իշխան:

Ազատությունն ե հացն այս աշխարհում,
Յերգեցք դովքը ձեր աղատ հացի:

Առաջ գնացեք, աշխատավորներ,
Յերգելով դովքը ձեր աղատ հացի:
Առաջ, անհողդողը, յերկրի տերն եք դուք:*)

Այս և նման վոդով դրված այլ յերդերը, արդյոք իրավունք կտա՞ն մեղ ասել, թե մեր բանաստեղծի «սոցիալական քննադատությունը վերածվում ե բնության և մարդու վերացական քննադատության»**): Բայ ընկ. Կիրապուրինի՝ «Նրան (Իսահակ-

*) «Հառաջ», 1906 թ. № 23

**) Վոչ միայն իր այդ յերգերում, այլ և արձակ գործերում իսահակյանը պայքարի ակտիվ ներդրմական ուղի յերանում, նրա Ուսան ամին (տես՝ «Համբեւանքի Զիբուխը» ժողովածուն) Աղայանի՝ Արդումանի ու Թումանյանի՝ Զագինի նման պայքարի յերանում հողաբաժանության ժամանակ տիրող կարգերի դեմ:

յանին չ. Դ.) թվում ե, վոր չարիքի, անարդարության և մոլորությունների մեջ մեղավորը վոչ թե հասարակարգը, այլ մարդկանց բնությունն ե: Մենք տեսանք և կտեսնենք, վոր վերոհիշյալ, ինչպես և այլ հղացումներում, իսահակյանի «սոցիալական քննադատությունը չի վերածվում սոսկ բնության և մարդկանց վերացական քննադատության»*): Բանաստեղծի քննադատությունից չի յերկում նաև այն, թե «չարիքի, անարդարության և մոլորությունների մեջ սոսկ մարդկանց բնությունն ե մեղավորը»**):

Մեղավորը աշխարհը զուլում դարձնող, «դառը դատող» խեղճ աղքատների հաշվին ապրող հարուստ

*) Յեթև հիրավի նույնիսկ «Արու-Լա-Լա Մահարի»-ի մեջ Հեղինակի քննադատությունը «սոսկ» բնության և մարդկանց վերացական քննադատության հանդեր, ասու ցարական գրաքնությունը այդքան շատ չեր վախենա և չեր արգելի պամի ամբողջական տպագրության դործը Բուսաստանուք: Անշուշտ, «Արու-Լա-Լա»-յի մեջ ել րանաստեղծը ապստամբվել և տիրող հասարակական կարգերի, գոյություն ունեցող որենքների դեմ: Այդ ապստամբությունը ճշտ ե յուրովի եր, չոքած եր, բայց ապստամբություն եր: Ինչ վերաբերվում ե «Սասմա Մէկերին», այդ մասին չենք խոսում, ուր արդեն շատ ավելի վորով և արտահայտված բուրժուական կարգերի հիմնի վեր խորտակման, աշխարհն ալերելու հեղինակի տեսնենցները, ուամկություն բերելու նորատակով: Իսահակյանի ամրողջական ստեղծագործության ընդհանուր յեղակացությունը պարզ ե. — չարիքի, անարդարության, բնության ինդրում նա մեղավոր և համարում, վոչ թե սոսկ մարդկանց բնությունը, այլ և հասարակարգը:

**) Տես. Վ. Կիրոտին «Պոэзия Армянского народа» Москва, 1938 г. стр. 83.

մարդիկ են : Ճիշտ ե , Իսահակյանի սոցիալական քըն-
նադատությունը փոքր ինչ յուրորինակ բնույթ ունի ,
բայց կը կնում ենք , այդ չի նշանակում , թե նրա մոռ
այդ քննադատությունը վեր ե ածվում «բնության և
մարդկանց վերացական քննադատության» : Այսպես
մոտենալ խնդրին՝ նշանակում ե արժեքազրկել . մեր
հեղափակի պունդիայում յեղած սոցիալական հարցերին
գիրաբերվող քննադատությունը : Մեկից ավելի ան-
դամ «անխնա նշավակելով» իշխող բուռնցքը՝ հաշ-
տության , հասպանգության խոսք չի ասում պոետը :

Անհուն վլրեժի և ատելություն
Դըժոխիքն ե այրում թունոտ իմ հողին .
Յել յես չեմ բերում խոսքը հաշտության ,
Վոր ծանր ե պառկում աղքատի ուսին :

Յերազկոտ սիրո յերդեր հորինող պոետը Հայնե-
յին ե հիշեցնում այսպիսի պարագաներում , վորն իր
մասին ասել ե .

Մի՛ նվա կյանքում վերթերի նման .
Վոր սիրում ե սոսկ Շարլոտաններին ,
Հնչիր դու ինչպես զանգը տաղնապի ,
Դաշույնը յերդիր ե սուրը յերդիր :

Յել մի՛ թող յերբեք յերկիրը ննջի
Մի՛ լինի սըրինդ դու մեղմ ու անուշ ,
Կամ վողբերգական մի քնքուշ հողի . . .

Յել հիրավի «ծաղկանց և սոխակների կուսակ-
ցության պատկանող» իսահակյանը Հայնեյի նման
պայքարի յել յելնում հատու զենքերով , յերբ պահան-
չում են այդ իր հանրային հարազատ հատվածի աշ-
խատավոր ժողովրդի շահեցը . բուրժուական հասարա-
կարգում , ուր դարվինիզմի բացարձակ որենքն ե իշ-
խում , պարզ ե , վոր չարության իժերին չի կարելի և
չպետք ե սիրո սրինգով թովկել . ուստի պոետը յու-
րովի կովի կոչ ե անում , բարձրացնում ե աղքատի
բազուկը «ինչպես վլիսակալ ոճն անսպատի» և նրա
ձեռքին «սուրն ե դնում ահեղ ճշմարտի» : Սակայն
յերեմն ընկնելով ոտարոտի ազգեցությունների տակ՝
բանաստեղծի համար կասկածելի յե դառնում «սուրբ
ճշմարտության» գոյություն ունենալը . այդ ե պատ-
ճառը , վոր նա կյանքի կովում գոյություն պահպա-
նելու մի այլ , իր դեմոկրատական վողուն անհարիր
թեղ ե զարգացնում , այն ե՝ ճղմել իրենից թույլին .
ապրել նրա հաշվին :

Կյանքն ե պայքար՝ գոռ ու գաժան ,
Ճըզմիր մարդուն թըռիր վիր ,
Իրավունքը ուժն ե միայն ,
Վայ հաղթվածին , հազար վայեր :
Տեր կամ սորուկ պիտի լինիս —
Ճշմարտություն չը կա ուրիշ :

Նիցշեյականության վորոշ չորշովներ կան ու
տեղ*): Իսահակյանը ինքս ու խոսուզառու ե նիցշեյի

*) Նման ձևական նմանություն գոյություն ունի իսա-
հակյանի այդ վոտանավորի և Գյոթեյի Կոթիսկի Լիուժել :

աղջեցությունն իր վրա .*) սակայն այդ բանը իրառ վունք չպիտի տա վորոշ քննադատներին մեր պուտին Նիցչիլ «Ճանաչված», հետեւղական աշակերտն անվանելու: Յեթե իսահակյանի համար իսկապես նիցշեյականությունն ամբողջական, հետեւղական աշխարհայացք լիներ (վորպիսին մենք չենք ընդունում), տպա ի՞նչու, յերբ հերթը իրեն և Հանում ճգմելու ուրիշին, նա չի կարողանում կենսազործել իր քիչ առաջ արծարծած մուրճ կամ զնդան լինելու, իրենից թույլին հալածելու տեսակետը:

Կյանքի կըովում ամենքը դեմ ամենքի՝
Սուր են սըրում ամենքը դեմ ամենքին.
Սուրը ձեռքիս՝ կըոիվ հանած ընկալ վար,
Յես չեմ կարող մըտնել պայքար անարդար—

Խըլել բերնից արնոտ հացը աղքատի,
Վառ քըրտինքը ծըծել տանջված ճակատի:

Իսահակյանի աշխարհայացքի մեջ աշխատավորական, դեմոկրատիզմի վողին ամուր նստած լինելու, թույլ չի տալիս նրան վերմարդը դարձնել իր դրոշակը, ճնշելով, ճգմելով թույլին, տնանկին խըլել նրա բերնից: «արնոտ հացը»: Ճիշտ են նկատել պըռփ. Ա. Տերտերյանը, Կիրապոտինը և նրանց հետ ուրիշները, թէ՝ իսահակյանն անվթար ե մնացել նից-

*) Տես իսահակյանի Վեսելովսկուն գրած նամակը, տես նույ 1937 թվականի «Դրական թերթ»-ի ապրիլի 20 համարը:

շեականության գիշատիչ կողմից^{*)}: Յերբ յենուամ ենք իսահակյանի համայն ստեղծագործությունների եյությունից, պարզ յերեւում ե, վոր նիցշեյականությունը նրա մոտ ոտարութի, դրֆերից քաղված գաղափարներ են, կամ բերովի, չորացած արմատներով մի բույս, բայց յերբեք խոր համոզմանք ու կազմակերպված աշխարհայցք: Յեկ հիրավի. չե՞ վոր նիցշեյի քարոզած արխատոկրատ դերմարդը դեմոկրատ իսահակյանի անհաւատ թշնամին ե, այն իսահակյանի, վորը ազատություն, սուրբ ճշմարտություն ե սիրել ու տենչացել իր «Կյանքի չեմքից».

Զայն հնչում ե խավարի խորքից,
Գրթա, հայտնվիր սուրբ ճշմարտություն.
Յես քեզ եմ վինտրել իմ կյանքի շեմքից,
Յեկ տես. քարացա անհուն տանջանքում:

Վորո՞նք եյին այն բյուր ուղիները, վորոնցով լինթացող պոետը ուղում եր բոնել իր վաղուց յերադա կապույտ թուչունը (ազատությունը): Յերկու տարի առաջ, իր անցած ճանապարհի մասին խոսելիս, իսահակյանը խոստվանել է հետեւյալը. «Ինչո՞վ չարվել, ի՞նչ վելիսովիայություն, եթիկական, չեմ տարվել, ի՞նչ վելիսովիայություն, սիստեմներով՝ ազատագրելու տահապող մարդկությունը: Յեղել եմ տոլմտյական,

*) Պըռփ. Ա. Տերտերյան. «Հայոց նոր գրականության պատմություն» 19-20-րդ դ. դ. պըռփ. 5-րդ, Ա. իսահակյան; 1939 թ.— Յերեան:

նիցը և յական, գերմանիայում ուստանող ժամանակու սոցիալ-դեմոկրատ: Հուսահատված դարձել եմ ան-իշխանական, պեսիմիստ: Տարվել եմ Բուղդայով»:^{*)} Ահա իսահակյանի անցած այն «բյուր ուղիները», բյուր կեռմանները, վորոնցով ընթացողը պարզ է, վոր չեր կարող գտնել «սուրբ հշմարտությունը», այլ կմնար չվար այդ ուղիների լարիբինթոսում:

Սակայն չմոռանանք կրկին չեշտել այն, վոր սկսութից իսահակյանի մեջ յեղել և խեղճի դատը պաշտպանելու իղձը: Յեվ նա ամենուրենք, թե իր բանաստեղծություններում (մենք արդեն տեսանք այդ), և թե հոդվածներում ու նամակներում չի հոգնել, չի խնայել նշավակել այն անաշխատ, ընչափաղ դասակարգ, վոր ապրում եր խեղճ աղքատի հաշվին, վորը «Արբենի» ծաղրով արհամարհում եր «հայ ստեղծուկործ միտքը», քաղցի յենթարկելով նրա անխոնջ մըշակին: Մատուրյանին, նրա գրական դորձունեյության 25-ամյակի առթիվ գրած իր մի նամակում, այդ կանգակցությամբ այսպիսի տողեր ենք կարդում: «... Իմ ավագ ընկեր, իմ սիրելի ընկեր, և դուք մի հավատացեք այն ծափերին և ճառերին, վորոնք վազր վորոտալու յեն, ի պատիվ Զեղ. Իմ խորին համողմունքով հայ գրական խոսքը միշտ արհամարհված և հայ ստեղծագործ միտքը միշտ ծաղրված հենց այն մարդկանց կողմից, վորոնք վաղը կուշա վորկորով պիտի շրջապատեն Զեղ, մյուս որը Զեղ նորից արհա-

մարդելու և ծաղրելու համար»^{*)} ... Հետաքրքիր եիմանալ ովքեր են այդ անձինք, վորոնք արհամարհում են մեր ստեղծագործ միտքը: Նամակի հաջորդ տողերից հայտնի յեւ դառնում այդ. «Դուք մի՛ հավատացեք, — չարունակում ե իսահակյանը, — մեր անտաշեք, — չարունակում ե իսահակյանը, — մեր անտեղակետ ինտելիցիային, մեր այլասերված ուսանողությանը և մեր գիշակեր բուրժուազիային. Նրանք, վորոնք ովսաննա յեն տալիս Զեղ, հավատացնում եմ վորոնք ովսաննա յեն տալիս Զեղ, վոր չեն ել կարգացել Զեղ ստեղծագործությունները»: Ահա այդ «գիշակեր», «գլուխը ստարաները», նյութապաշտ, այլասերված բուրժուազիայիցած», այլասերված բուրժուազիայի նրա անպատճ, պարապուրդի զիրիլիկենցիայի համար ե, վոր պոետը գուշակում և գալիքում վորուսուի:

Յես ձեզ ասում եմ՝ կըդու վոգու սով, Յեվ դուք կըքաղցեք ճոխ սեղանի մոտ, Կընկնեք մուրալու հարբած վորկորով՝ Հըրելեն խոսքի, վեհ խոսքի կարոտ: Լըրենի ծաղրով արհամարհեցիք Վոգու վառ զեղմունք-միտք ու յերազանք, Նյութի տաճարում արբած պարեցիք՝ Մոռացած անմահ, անհունի տենչանք:

Դուք, վոր հեկնեցիք ուժն ստեղծագործ՝ Զեր նյութի հանդեպ կըքա վոգու սով,

^{*)} Իսահակյանի այս նամակը լույս և տեսել արվեստի վաստակավոր գործիչ ընկ. Գարեգին Լեոնյանի իմբագրած «Գեղարվեստ»-ի 1911 թ. № 4ում:

Յեկ մուրացկի պես փշրանքի համար
Ծարավ ու նոթի կանցնելը ծովին ծով...

Լինելով հասարակական-քաղաքական կյանքով
ապրող, և վերին աստիճանի շուտ տպավորվող բա-
նաստեղծ, թրյուովիլի խոսքով ասած՝ թօթ:

Իսահակյանն իր ժամանակ արձականքեց մեր մո-
տիկ անցյալի հասարակական-քաղաքական կյանքի անց
ու գարձերին: Յեկ այն ժամանկ, յերբ այլ բանաս-
տեղծներ ազգամիջյան կոտորածներ եյին հրահքում՝
ուազմի կարոտ բազեյի նման ծղրտալով հանուն
«հավելյալ արյան» շիթերի, նույն այլ ժամանակա-
շրջանում եր, ահա, վոր խաղաղության, հաշտու-
թյան, սրբազն գաշինքի, աղատության խրոխոտ ու
լիաթոք զանդի զողանջներ եյին հնչեցնում մեր ամե-
նաղեմոկրատ հեղինակներից յերկուսը՝ թումանյանն
ու իսահակյանը.

Ազատության զանդ, գուշ վե՛հ զողանջե՛
կովկասյան վաե՛մ, վե՛ս բարձունքներից,
ինչպես մըրբեկը, չաչե՛, չառաչե՛,
Մինչեւ սիդապանծ ազատն Մասիս:

Անհագ վըրեժի և ըմբոստացման,
Յեկ բուռն ցասման բարբառը հնչե՛,
Ժողովուրդների անկա՛խ, ինքնիշխա՞ն
Դաշն աղատական խրոխոտ զողանջե՛:

Բուռն վոգեվորության և համակ ներշնչման ար-

դասիք և իսահակյանի այս յերգը, վոր նպատակ
ունի արդարե դարավոր նիրհից արթնացնելու Մա-
սիս ու Կազբեկը: Բանաստեղծը մահու և կենաց
սրայքարի յե՛ վոգեկոչում կովկասի բովանդակ ժո-
ղովուրդներին «ընդդեմ բոնության, ամբարիչտ չա-
րի», վորը տապալվի պիտի աշխարհասասան ուժե-
րից, և նորող արեի տակ ազատության զանգը պետք
է տարածի իր զողանջները համասփյուռ «բյուր գա-
ղաթներից ազատ կովկասի»:

Իսահակյանի «Ազատության զանգը» գրված է 1903
թվին: Մենք դիտմամբ չեցում ենք այդ հանգաման-
քը, վորովհետեւ բանաստեղծը հիշյալ գործով կանխել
եր ուղում մոտալուտ ազգամիջյան ջարդ ու ավեր-
մունքները, վոր պիտի տեղի ունենային և ունեցան
1905-6 թ. թ.: Այն, ինչ այդ որերին սպիտակ գրո-
շակը պարզած կարողանում եր անել թումանյանը Լո-
ռում և մերձակայքում «իրար ում կանգնած ժողո-
վուրդների սրերը պատյանը զնել տալ»-ով, այդ նույն
նպատակին եր հետապնդում նաև «Ազատության
զանգ»-ի հեղինակը «սուրբ յեղբայրության տոնին»
կանչելով կովկասի բովանդակ ժողովուրդներին: Ի-
սահակյանի այն խոսքը, թե «ազգերի յեղբայրացման
վոսկի ողակն եր թումանյանը...»,*) վերաբերում է
նաև իրեն: Իսահակյանն ու թումանյանը ամեն կերպ
աշխատել են սրերի հետան զարձած յերկիրն ու վող
ժողովութը հեռու պահել ազգամիջյան ջարդ ու ավե-
րից: Ճիշտ և ասել թրյուովիլը, թե «Պօթ եւ այս բյուառովը, թե

*) «Արեդ» 1923 թ. եջ 299:

людьми, когда шумит гроза»: «Հերավի, իր ժողովրդի զոյտության, նրա փրկության ու հաշտության յերգը յերգելն եր ավելի կարեռ իսահակյանի համար նըման գեղքերում, քան սիրային լիրիքական տրտունջները, վորի համար նա այլ անդամներ բավական ժամանակ եր արամագրել:

Գրականության պատմության իսկության դեմ մեղանչած կլինեյինք, յեթե չասեյինք, թե Իսահակյանն իր մի շարք հայրենասիրական, աղատասիրական վողով գրված վոտանավորների կողքին («Հե՛յ ջան հայրենիք, ինչքա՞ն սիրուն ես», «Հայոց դեղջուկի ծավալուն արտեր» և այլն), իր քնարին հիմնականում վոչ բնորոշ, մի քանի այլ նվազներ ել ե հընում վոչ բնորոշ, մի քանի այլ նվազներ ել ե հընում վոչ բնորոշ, մի քանի այլ նվազներ ել ե առաջցրել: Այդ զգալապես սակալ դառն յերգերի առաջցրել: Այդ զգալապես սակալ դառն յերգերի թումանյանալու պատճառը կարելի յե բացատրել թումանյանի հետեւալ պատերազոր արտահայտությամբ. «Են վարունդի թուփն ինչ ե, հայտնի յե, վոր յեթե նա ել վոտի տակ ե ընկնում՝ ել նրա պտուղը չի ուտում, ենքան ե դառնանում: Նրա համար ել Զեղթույլ չեն տա, վոր նրա թուփը տակով անեք: Եղագես դառնանում ու դամանանում ե ձարգը, նրա հոգին, սիրտը, միտքն ու ներքին դառնությունը դուրս ե տալիս, հայտնվում ե՝ աչքերում, և դեմքին, և տակալիս դառնանում ու ամբողջ կյանքը դարձնում ե դառն ու դա-

ժան»^{*)}): «Հերավի այդպիս կոխստելով մեր ժողովը գին, Փեղալական թյուրքիայի և ցարական Ռուսաստանի ծանը սապողը դառնացրել ե նրան: Ահա այդ դառնությունն ե, վոր յերբեմն արտահայտվել ե մեր ժողովրդի բանաստեղծական բերանը հանդիսացող սուետների յերգերում:

Իսահակյանի 1908 թվին լույս ընծայած բանաստեղծությունների ժողովածույում արդեն նկատելի յեն հակումներ գեղի գրական այն ուղղությունը, վորն անցյալ գարի 90-ական թվականներին տիրաբար իշխում եր ուստական և յելլոպական գրականության վրա: Յես խոսում եմ սիմվոլիզմի և նեռուոմանտիզմի մասին: Իսահակյանը Տերքանի հետ մեկտեղ մոտեկ լինելով գրական այդ ուղղություններին, կարողացավ նրանց բոլոր գրական կողմերը (լեզվի, չափի, յերաժշտության) բերել հայ գրականության մեջ՝ գեկադենտական ծայրահեղություններն ու այլ կարգի սեթենթությունները բաժին թողնելով ուրիշներին:

Վալերի Բրյուսովը նշելով սիմվոլիստական գրականության ազդեցությունն իսահակյանի վրա, զւրում ե. «Սիմվոլիզմն արտահայտվել ե հայ պոետի ստեղծագործություններում միայն իր հիմնական գր-

*) «Հորիզոն», 1910 թ. № 130, «Դառնացած ժողովուրդը»:

ծերով, ավելի շուտ վորպես աշխարհայացք, քան
վորպես դրական ծրագիր»*):

Այս՝ իսահակյանի մոտ սիմվոլիզմն ավելի շուտ
իրեւ աշխարհայացք եւ հանդես յեկել, քան վորպես
դրական ծրագիր: Իսահակյանն ընդհանրապես ավելի
դերմանական նեռուժանտիզմին եւ մոտ, քան սիմվո-
լիզմին: Յերբ համեմատում ենք մեր պոետի ստեղ-
ծագործությունները (խոռն Իսահակյանի ժողովրդա-
կան յերգերի վորով կը վածքների մասին չե), չա-
փակոր սիմվոլիստ Տերյանի, նեռուժանտիկ Հայնեի
յերգերի հետ՝ ակնբախ եւ դառնում նրանց և Իսա-
հակյանի արտահայտած տրամադրությունների հա-
րազատություն: Վոչ միայն տրամադրությունների
հարազատությունը, այլև հարանման զգացումների
արտահայտության բնորոշ յեղանակներով եւ Իսահակ-
յանը նմանվում է այդ պոետներին: Նրանց նման՝
Իսահակյանը ևս հաճախ սիրում է իր ապրումները
յերազի ձեռվ արտահայտել: «Յերազ տեսա ձեր տան
առաջ», «Յերազումս տեսա որոր ու չօրոր» և այդպիս
շարունակ: Յերազում նրան հաջողվում եր գտնել
իրական կյանքում ձախողած սիրո տուարկային: Այ-
անիրական տեսիլքով իրեն հայտնվող «ցնորք աղջկա»
մասին ե, վոր պոետն ասում ե.

Ուրկից կը դա, չգիտեմ,
Ով ե, ի՞նչ ե, ո՞ւր կերթա.

*.) Поэзия Армении, под редакции В. Брюсова, 1916,
Москва.

Կուզեմ ընկնեմ յետևեն,
Երթամ, ուր վոր նա կերթա:

Այդպես «գեղեցիկ ստի» յետեից եյին ընկնում
նույն ցավից տանջվող հարանման ապրուժների յեն-
թակա ուժանտիկ Հայնեն, սիմվոլիստ Տերյանը և
զրական այդ ուղղություններին փարած այլ պոետ-
ներ:

Իսահակյանի 1890 և 1905 թ. հաջորդ ուժակ-
ցիայի շրջանի ստեղծագործություններում արտահայ-
տություն ե գտել հասարակական կյանքի հուսախա-
րությունը ևս: Նրա նույն այդ ուժակցիայի որերում
գրած բանաստեղծությունների մի վորոշ մասում
արտահայտվում են պոետի ի դերեւ յելած ակնկալու-
թյուններն այդ հեղափոխությունից, վորի անհաջող
ընթացքի պատճառով բանաստեղծն իր հանրային
հարազատ հատվածի հետ յերբեմն կորցրեց կյանքի
ուղին և «տարագիր թոշունի» նման անկայան ու ա-
նապալեն հածում եր անորոշ ուղիներում, յենթարկ-
վելով հասարակական կյանքի վայրիվերումներին:

Իմ հողին տարագիր՝ մի թռչուն՝
Մրսրկով զարնված թեաթափ.
Հողմերն են հետ վլխիս շառաչում,
Յեվ ուղիս անհատնում և անափ:

Հողերանական հար և նման վիճակ եր ապրում և
Տերյանը.

իմ հոգին ծովերում անծանոթ
Մենակոր ու մոլոր մի նազակ,
Մատնեցին փոթորկին աղմկու,
Հուսաբեկ թողած դեկ ու թխակ...

Ինձ հեռվից լույս—վարոս չե կանչում
Չի ժպտում ինձ խաղաղ հանգըվան,
Միայն հողմն ե տխուր շառաչում,
Անթափանց մեղմչուշ ե միայն...

Իսահակյանի և Տերյանի հիշյալ բանաստեղծությունները ներկայացնում են մեր մանր բուրժուական մտավորականության մի մասի մտորումներն ու ապրումները, նրանց հոգեկան կայությունը: Նման որերը ծնել եյին նման վհատ յերդեր: Իսահակյանն իր հարազատ հանրային հատվածի հետ կորցրել եր կյանքի ուղին, վոր «սև ու մուխ եր և մոլոր», իսկ Տերյանը յուրայինների հետ իրեն համարում եր «մի իւնթ լուսնոտ», վոր «ուրվականորեն շրջում եր անվերջ»:

Յելք չզանելով դուրս կալու այլ կախարդական շրջանակից, մեր բանաստեղծներին որոշարում ե հոռոնետառությունը: Պոետի սրտից սկսում են յերեկվանրա յերգերը թափվել «տրտում ու թալուկ»:

Թափվեցին տերեններն աշնան ծառերից՝
Թոշնած ու դալուկ,
Թափվեցին յերգերս բեկված իմ սրտից
Տրտում ու թալուկ:

Իր արտահայտած այս կարգի տրամադրություններով իսահակյանը ներդաշնակվում եր գրական հըրապարակում իշխող այն ժամանակվա յերդասահներին, նրանց տանջող ցավը իսահակյանին ել եր պատել:

Նույն հասարակական կյանքի վայրեջքի որերին եր, վոր իսահակյանը տեղահան յեղած՝ ուժ տվող իր հայրենի հողից ու ըրից՝ թափառում եր ոտար ամայի ճամբեցում, «կյանքի մրրկով զարնված թռչունի պես հոգնած ու ծյուրված»: Թե իր անձնական անհատական, և թե հասարակական-քաղաքական կյանքի պատճառած լլանքներից խոնջացած՝ հոգնաբեկ բանաստեղծը «մենիկ անտառ»-ի, բնության խաղաղ գիրին ե ուղում քաշվել՝ առվի խոխոջով ուշքը կախարդելու «ինքնամոռացության չքնաղ յերազով»...

Հոգնած եմ, անտառ, հոգնած ուժասպառ,
Խորտակված սրտումս ել չի բըռնկվում...

Հոգիս թոցնող սերը բոցավառ...
Սի, մայրի անտառ, քո մենիկ գրկում
Քընել եմ ուղում— անհող ու անդորր:

Սա արդեն վոչ միայն իսահակյանի, այլև այդ շրջանի բոլոր հուսալքված, հոգնաբեկ պոետների բաղձանքն եր. ներանձնանալ, մոռանալ ամեն ինչ և ամենին: Միթե այդ նույնը չե՞ր թախանձում և Տերյանը, յերբ գրում եր.

Մի անմայր մանուկ, հեկեկանքներից
Հոգնած ու բեկված— ննջել և ուղում,

Մի վըրդովեք դուք, մի տանջեք նորից,
Մի տանջեք նորից— հանդէլ ե ուզում...

Հողերանական նմանորինակ վիճակներ արտա-
հայտելու համար խահակայանը դիտեր վերարտադրել
բնությունն «ի պատկեր իւր և ի հանգույն»: Հողմի
ըերանն ընկած արցունքի նման դողացող տերեների
միջոցով բանաստեղծ խահակայանը տալիս ե իր հո-
գերանական հար և նման վիճակը.

Աչուն ե, քամի'...
Տերեները մի-մի,
Արցունքի նման
Դողացին, ընկան...

Փչում ե, ասե՛ս,
Ունայնության պես,
Քամին ամեհի,
Ճամբում ամայի:

Սմքել ե հողիս
Մռայլ դիչերիս,—
Զգիտեմ մահից,
Թե՞ կյանքի ահից...

Ակամայից հիշում ենք նման տրամադրություն
արտահայտող Տերյանի «Աշնան յերգը»:

Ցրտահար, հողմահար,
Դողացին մեղմաբար
Տերեները դեղին,
Պատեցին իմ ուզին:

կամ «Նորից անձրեւ, մշուշ ամպ» և այլ հղացումները:
Խսահակյանի այդ շրջանի ստեղծագործություն-
ներում իրականությունից փախչելու տրամադրու-
թյունները հարածուն հասունանում եյին: Տակավին
իր լիրիքական բանաստեղծություններում՝ խսահակ-
յանն ունի «Աբու-Լա-Լա Մահարի» պոեմի մտահղաց-
ման սաղմերը՝ ուր ինչպես ճիշտ կերպով նկատել ե
Բյուսոսովը, «առանձնապես պարզ, նկատվում ե սիմ-
վոլիստական շրջանի դրականության աղղեցությու-
նը»*): Յեկ իսկապես, «Աբու-Լա-Լա»-յի բեկորները
կարծես լինեն այս և նման բանաստեղծությունները.

Ոտար. ամայի ճամբեքի վրա
Իմ կարավանը մեղմ կըզողանջեն,
Կանգնիր, կարավանս, ինձի կըթվա
թե հայրենիքես ինձ մարդ կըկանչե:

Բայց լուր ե չուրջըս ու շշուկ չը կա
Արեավառ, անդորր այս անտպատում.
Ալս, հայրենիքըս, ինձ խորթ ե հիմա,
Ու քնքուշ սերըս ուրիշի գրկում:

Կնոջ համբույրին ել չեմ հավատա,
Շուտ ե մոռանում նա վառ արցունքներ,
Շարժվի՛ր, կարավանս, ինձ ո՞վ ե կանչում,-
Գիտցիր, լուսնի տակ չկա ուխտ և սեր:

*) Поэзия Армении, под ред. В. Брюсова, 1916 г.
Москва.

Գլուխ', կարավանս, ինձ հետըդ քաշ տուր
Ռտար, ամայի ճամբեքի վըրա,
Վորտեղ կը հոգնիս զլուխըս դիր վար
Ժեռ քարերի մեջ, փըչերի վըրա...

Այսպէս վախս առած ուղուերի հետ անապատ
դնալու, մենանալու դաղափարը, «Արու-Լալա Մահա-
րի»-ից առաջ արտահայտվել է Խառչկանի «Երդեր
ու վերքեր»-ի մեջ, վորը նույնպէս արդասիք եր
չիշխալ գրական ուղղության աղղեցության:

Նույն այդ 1905 թ. հեղափսիսությանը հաջորդող
հասարակական կյանքի զեկալանսի տարիներին եր,
յերբ կորցրած «Նորոգ հույսի կախարդ հորիզոննե-
լը», վոր ասել ե թե նաև ապրելու հոկա տենչելը,
բանաստեղծին սկսում ե ավելի ըստեղ-ըստեղ այցե-
լել մահվան մղձավանջը, այն՝ վորոշ շրջանում
սկսեց տիրաբար իշխել նրա դիտակցության
մեջ: Այդ շրջանում եր գլխավորաբար, վոր
մահ ու մահերդ եր յերդում խահակյանը— «գերեղ-
մանս անհայտ լինի, «Յես վոր մեռնեմ», յել այս-
պէս շարունակ մահվան ահը իր սարսուռն եր հարա-
ժամ զգալ տալիս նրան: Հիմնականում այսպես չեր
պոետն իր գործունեյության վաղ շրջանում, և դա
հոգեբանորեն ել հասկանալի յերբ այդը նոր ե
բացվում, յերբ արել զենիթին ե հաւնում, իսկապես
ովք ե մտածում, թե որը մեռնելու յե: Ուրիշ խնդիր

ե, յերբ թախծուտ յերեկոն ե վրա հասնում: Պետք ե
ասել, վոր հետո, արդեն ներհուն դարձած պոետը
փորձում ե իրեն այցելող այս մահվան մթին հարցերը
փիլիսոփայական սառնասրտությամբ քննել, այդ ա-
մենը խորապես դպալու, հասկանալու, լերգելու հա-
մար: Լինելով բանաստեղծ՝ (և ինչպիսի՛) խահակյա-
նը փիլիսոփաների նման հասկացողություններով չի
մտածում, այլ զերազանցապես սպատկերներով ե ար-
տահայտում հիշյալ հարցերին վերաբերող խորհրդա-
ծությունները: Որինակ՝

Այս միտքը, թե մարդկային կյանքը հետաձբւ-
ված, և այն ել շատ կարճ ժամանակով, վայրկյանի
տեղությամբ, մահ ե — բանաստեղծն հետեւյալ
կերպ ե արտահայտել իր «Խավեննայում» խորադի-
րը կրող գեղեցիկ բանաստեղծության մեջ.

Արարատի ծեր կատարին
Դար ե յեկել, վայրկյանի պես,
Ու անցել:

Անհուն թվով կայծակների
Սուրն ե բեկվել աղամանդին,
Ու անցել:

Մահախուճապ սերունդների
Աչքն ե դիպել լուս գաղաթին,
Ու անցել:

Հերթը հիմա քոնն ե մի պահ,
Դու ել նայիր սեգ ճակատին,
Ու անցիր...

Աղարատի ծեր կատարը հավերժության սիմվոլ ե
ընդունված այստեղ : «Մահախուճապ սերունդները՝
յեկել ու անցել են աչքերը կացնելով նրա լույս դա-
դաթին : Հերթը հասել ե այժմս իրեն՝ պոետին, նո
ևս իր հերթին «մի պահ» պիտի աչք կպցնի նրա սեղ
ճակատին ու անցնի, վորովհետև մարդկային կյանքի
տեղողությունն այդքան ե : Մահը, այդ ամենահզոր
բանը, իսահակյանի գրչի տակ բանաստեղծորեն պատ-
կերվում ե, վորպես,—

Անտես, անձայն,
Մի քարավան

Վորը

Գիշեր ու գոր
Կերթա՛, կերթա՛...
Վող աշխարհը
Կը արորե,
Փռչի կանե,
Քամուն կուտա:
Յեվ հավիտյան
Կերթա՛, կերթա՛...

Բայց միայն ապրող դոյությունները չեն, վոր
մահկանացու յեն : Աշխարհը՝ «սդի այդ տունը, վորի
հիմքը մահի վրա յե կառուցված», ինքն ել մահկանա-
ցու յե և վերջ ունի : Նու ևս մշտապես մահվան բհ-
րանումն ե :

Յեվ մահը նրան
Մամում ե, ծամում :

Այսպես ուրեմն, յերկրի վրա ամեն, ամե՞ն ինչ
մահկանացու յե ու վերջ ունի . ել ո՞ւր մնաց կյան-
քը, վոր են գլխից հետաձգված մահ եր : Բայց վո-
րովհետեւ ինչ ել վոր լինի՝ կյանքն ավելի քաղցր ե
քան մահը, ուստի մահանալու, անեանալու գաղա-
փարը, ինչպես յուրաքանչյուրի, այնպես ել բանաս-
տեղծի հոգում զարթեցնում ե հավերժանալու, ան-
մահանալու սին տենչեր :

Հավերժանալու ձգտումներով համակված բանաս-
տեղծը սկսում է մեջ բերել Զորդանո Բրունոյի «Ան-
մահություն», քո եյության մեջ ե և իմ եյությունը»
խոսքերը :

«Հաղթահարելու» համար անեանալու, մահանալու
գաղափարը՝ բանասեղծի միտքն սկսում ե հածել այլ
ուղղությամբ : Նա դուրս ե գալիս մահկանացույով
կնքված կախարդական ըրջանակից բնության մեջ
ձուլվելու, կոսմոսի մասնիկը դառնալու յեղանակով :
Բնության հետ ասլրելու, միաձուլվելու կարողու-
թյունը կենսախինդ ե դարձնում պոետին և վանել ե
տալիս նրանից մահվան մթար գաղափարը : Պոետը
հոգերանորեն արդեն այն համոզման ե զալիս, վոր
ինքը տիեզերքի անբաժան մասնիկն ե, վոր «տիեզեր-
քը մեծ լցվում ե իրենով», իսկ տիեզերքի մասը լի-
նել՝ նշանակում ե անմահ լինել .

Ծովն ե սրտիս մեջ ծփում յերազով,
Զգում եմ յես ինձ առվի, ժայռի՝ հետ.
Տիեզերքը մեծ՝ լցվում ե ինձնով,
Մեկ եմ զգում ինձ յերկրի, յերկնի հետ :

Անհուն հիացքով սիրտը և զարկում,
Խորեն ցնծությամբ վողջունում եմ յես,
Յեվ որհներդում եմ և գրկախառնվում
Մեծ և անսահման բնությանն հավերժ :

Իսահակյանի մասշտաբնելն արդեն մեծացել են,
«Հոգու չահերով արեգակվել են նրա մտածումները»:
Բանաստեղծը գտնում է մարդուն և բնությունը կա-
պող թելերը՝ «այս աշխարհի իրերից» փախչելով ան-
դրաշխարհի «բյուրեղ բարձունքները»: Իրեն տիեզեր-
քի պերճ հյուսվածքը համարող պոետը միանալով
բնության հետ՝ փիլիսոփայորեն «հերքում» և իր
մահանացու լինելու գառը ճշմարտությունը (վոր
ուրիշ անդամ ել հերքեց հավերժացող սիրո զգաց-
մամբ) .

Նրա սիրուն այժմ վորպես թե կրծքի անձուկ
վանդակում չի յրջափակված, յերեկա վերքոտ սիրու
դարձել և յերկինք:

— Սիրսա յերկինք և...
Ամեն արարած
Աստղ ունի այնտեղ—
Խորշ ունի այնտեղ :

Մենք արդեն տեսանք, վոր պոետը փորձում եր
փիլիսոփայորեն «հերքել» իր մահանացու լինելը,
«փախչելով այս աշխարհի իրերից» անդը աշխարհ-
ները: Սակայն յերբ իսահակյանի հորդացող խոհերը
տեղատվություն են կատարում, յերբ անցնում է

Հուզումների չքանը, բանաստեղծը նորից իրեն
դպում է Պրոմեթեոսի նման պիրկ չղթաներով դամ-
կած այս աշխարհի սլացիկ ծերպերին: Այդ ժամանակի
ե, վոր նա իրեն հարց է տալիս .

Ո՞ւր ե փախչում հոգիս անհուն
Այս աշխարհի իրերից.
Յեվ իրերի անդը աշխարհում
Ի՞նչ է պարում, տենչում նա:
Միայն յես ելի հասկանում ինձ
Յեվ յես ել ինձ չհասկացաւ:

Լավ և առում բանաստեղծը: Համայն վոչ միայն
մենք, այլ և ինքն ել իրեն չի հասկանում, յերբ
բոնվում է «յերկնքի ցալով», յերբ ձեռք և զարկում
վերացական անհաս բաներին:

Մենք արդեն տեսանք, վոր իսահակյանի միտքը
փիլիսոփայորեն խորհրդածելու հակումներ և ցուցա-
րերել, և դլխալորաբար իր գործունեյության այս
չքանում, յերբ պոետը տարիք եր առել և դարձել
ներհուն: Այդ փիլիսոփայությունը բանաստեղծի սոսկ
բազմամյա կյանքի կենսափորձից րզիսով՝ յես կաե-
ցի՝ նատուրալ փիլիսոփայության արդասիք չե, վո-
պիսին համեմատարար ավելի վորոշ նկատելի յե թու-
մանյանի ստեղծագործություններում: Գիտական ի-
մաստով փիլիսոփայական տարբեր սիստեմներին լավ
ծանոթ լինելու հանդամանքը ևս զգալապես նկատելի
յէ իսահակյանի ստեղծագործություններում, մի բան,
վոր թումանյանի միայն քառյակներում զգացվեց:

Յեթէ իսահակյանի, ինչպես և Թումանյանի մոտ այդ մտածումները չառկայծեցին իրենց արտակարգ նուռությամբ, ապա գերազանցապես որիդինալ, իսկական բանաստեղծական պատկերների միջոցով արտաքայտվեցին։

Մինչև հիմա մենք քննության առանք իսահակյանի ստեղծագործությունների այն բաժինը, վորը ոեֆլեկտիվ ե անվանել Բրյուսովը, և ուր նկատելի ելին սիմվոլիստական գրականության չորչոփները։ Մեզ մնաց վերլուծման յենթարկելմէր պոետի ստեղծագործությունների նաև այն մասը, վորն առանձնապես զունավորել ե նրա պոեզիան՝ վերքոտ յերգերին թարմություն ու կենդանություն ներարկելով։ Ես խոսում եմ իսահակյանի ժողովրդական ստեղծագործության վողով գրված լիրիքական բանաստեղծությունների մասին։

Իր ստեղծագործությունների՝ այս ամենալավ, ամենաառողջ մասով իսահակյանն ընդհուպ մոտենաւ ե Փոլկլորի անապական ակունքներին։ Մոտենալ ժողովրդական բանահյուսությանը՝ նշանակում եր մոտենալ գրական ռեալիզմին, վորովհետեւ ժողովրդի ստեղծագործությունը, նրա արվեստը ռեալիզմն ե։ Պուշկինի մասին խոսելիս իսահակյանը մի տեղ ճիշտ կերպով նկատում ե, «վոր ժողովրդական ստեղծագործությանն ընդհուպ մոտենալու չնորհիվ եր, վոր նա (Պուշկինը, Հ. Դ.) գրական դեկն ուղղեց ոռման-

արիզմի վորթորիկների միջով դեպի ճշմարիտ, իրական արվեստը»^{*)}։ Իսահակյանն ինքն եւ այդ կերպ վարդելով մասամբ մոտենաւ եր ռեալիզմին։ Իր ուսուցիչ չովհաննես Հովհաննիսյանի ու դրչակից Թումանյանի նման՝ իսահակյանն ոդտվել, սովորել և մեծ աղեկությունն ե կրել առաջին հերթին մեր, ապա՝ այլ ժողովուրդների բանավոր ստեղծագործություններից։ Այդ բանը չի ուրանում և ինքը իսահակյանը։ Ցուրի չեսելովսկուն գրած իր նամակում այդ առթիվ նու հետեւյալն ե ասում. «Ինձ վրա ամենից ավելի աղդեցություն են թողել հայ ժողովրդական յերգերը, ապա և այլ ժողովուրդներինը, հատկապես արեվելյան, ինչպես և մալուստական յերգերը»^{**)}։

Այդ ստեղծագործությունների հետ ունեցած անքակտելի կապի չնորհիվ ե, վոր իսահակյանն ամբողջապես չուղղեցրեց 1890 և հետադա տարիներում դրական հրապարակում իշխող սիմվոլիզմը։ Ժողովրդի հոգին եր, վոր ամուր նստած լինելով պոետի մեջ՝ փրկեա ի չարե դարձալ նրա համար։ Իսահակյանը յերեք չի նվազ իր ժողովրդական ստեղծագործության վոդով գրված յերգերում, յերբ հայրենի ուժ ավող ստեղծագործ հողի վրա յե իրեն զգում, յերը ժողովրդի անընկհելի կամքն ե իր մեջ լեռնացած տեսնում։ Այլ անդամներ համարակական կյանքի վայրի վերումներին յենթակա «տարադիր թուուն» դարձած պոետը չեր կարող այսպիսի տողեր չգրել.

*) «Գրական թերթ» 1937 թ. № 5

**) Ю. Веселовский «Русское влияние в современной Армянской Литературе» Москва 1909. стр. 25.

Կենսական ծովի հույզերի միջին
Յես ժայռի նման կանդնած եմ ամուր:
Կայծակն ե զարկում իմ վես ճակատին,
Յես ժայռի նման կանդնած եմ ամուր:

Հողմ ու վոլորիկ չուրջս են հածում:
Յես ժայռի նման կանդնած եմ ամուր:
Գոռ ալիքները կուրծքս են ծեծում,
Յես ժայռի նման կանդնած եմ ամուր:

Խնձնից բռնեցեք, խորտակված մարդեկ,
Յես ժայռի նման կանդնած եմ ամուր:
Զեր խարիսխները վոտքիս տակ ձգեք,
Յես ժայռի նման կանդնած եմ ամուր:^{*)}

Կրկնում ենք՝ այսպես կարող եր գրել ժողովրդի
անխորտակ հավաքական ուժն իր մեջ զգացող և ժո-
ղովրդի ակնաղբյուրից ուժ առնող բանաստեղծը:
Ծնվելով յերգաշատ Շիրակում՝ խսհակյանը
ու եռ մանկութիւնը և սովորել ե պոեմ ժողովրդի
հայրենի աղբյուրի վճիտ յերգերը, վոր կախարդում,
համակում եր նրա ուշքն ու հոգին: Մենք դիտմամբ
չշեցինք խսհակյանը՝ ժողովրդի ծնունդ լինելու
անդամանքը, վորովհետեւ, ինչպես ինքն և ասում,
ժողովրդի հանճարը ծնվում և ժողովրդի թանձրու-

*) Այս բանաստեղծությունը գրված է 1895 թ. և տակա-
վին անտիպ է, մեջբերումն անում ենք պոետի թույլատվու-
թայմբ:

Ա՞յս մր ի՞նչ անցած
Հայր, հաւաշամ.
Ա՞յս Տայր կոչ
ի՞ն պարք և հայշամ.

Այսիցի՝ այսիցի
Տահ-ա՛յ Միքայել.
Ես Տահը Տայր
Դաման ի, Տաման...

Հայր և այսիցի
ի՞ն սիրո գոյամ.
Դաման այսիցի
Բայրը ի՞ն սըշոմ...

Ան յասիալիք:

թյան ճնշումից, ինչպես աղամանդը քարածուխի ճնշումից: Յեկ այդ աղամանդը, նկատում ե պոետը, ժողովրդի զգացմունքների, նրա տենչերի, յերադների, նրա տառապահքների, նրա զայրույթների և կամքի խտացումն եւ կոնկրետացումը: Նրա մեջ արտացոլվում են ժողովրդի աշխարհաբառնումը, նրա կենսագործումը: Հանճարը ժողովրդի վորուդակնորումն ե, նրա համար ու թաղուն գիտակցության հայտաբերումը,— նրա ինքնադիտակցությունը, նրա խմատուն խոռքը^{*)}): Ժողովրդի ծոցից դուրս յեկած և նրա բանաստեղծական բերանը համութացող իսահակյանը գիտե վերջինիս կարիքն ու հոգսը, նրա խինդն ու խանդը:

Ինչպես յուրաքանչյուր մեծ բանաստեղծ, այնպես ել իսահակյանը ժողովրդական ստեղծագործության մշակման, ոգտագործման ինդըում ունի յուրահատուկ մեթոդ, վորով նա տարբերվում է զիցուք թուժմանյանից, կամ մեկ ուրիշից: Այսպես որինակ՝ յերբ թուժմանյանն եր ժողովրդական ստեղծագործությունը մշակում, ապա մեծ մասամբ առնում եր պատրաստի սյուժեն, և այդ կանվայի վրա ստեղծագործում իրենը: Նա զտում եր իր վերցրած բուն ժողովրդական յերգի կամ հեքիաթի բոլոր այն մասերը, վոր ավելորդ եր համարում, և պահում եր այն՝ ինչ անմեռ եր ու զեղեցիկ, դնելով նրա վրա իր տաղանդի ու աշխարհայացքի կնիքը: Այսպես մշակելով եր, վոր նա վարդան Այդեկցուց առած ժողովրդական «Մի

կաթիլ մեղրը»՝ գարձնում ե մի ծով մեղր: Վոչ միայն այդ, այլ և նրա «Բաղ Նաղարը», «Գութանի յերգը», և շատ ուրիշ բուն ժողովրդական հղացումներ պոետի կախարդական գրչին յենթարկվելով, ել ավելի զեղեցիկ ու գողարիկ գործեր ելին դառնում: Շատ քիչ եր պատահում, վոր թուժմանյանն իր ժողովրդական վոդի ունեցող ստեղծագործությունների սյուժեն ևս ինքն ստեղծեր: Այսպես չեր ոգտագործում Փոլկլորը Ավետիք իսահակյանը: Նրա ժողովրդական ստեղծագործության վոգով զբվածների ճշնչող մեծամասնության ամբողջական պատրաստի կանվան առնվազագույնը ժողովրդականից, միայն հաղվագեղ պարագաներում, և սյուժե ունեցող ժողովրդական ստեղծագործությունները մշակելիս եր, վոր Իսահակյանը ևս թուժմանյանի նման պատրաստի կանվան առնում եր բուն ժողովրդական բնադրից: Մանացած պարագաներում, մանավանդ իր այնպիսի վոտանավորները զբելիս, ինչպես «Մաճկալ ես բեղարած ես», կամ «Զմեռն անցավ յեկալ գարուն», «Հագել ես կարմիր», «Ոխար սարով հեռու քեզնեն», և ժողովրդական յերգերի վոգով զբված այլ յերգերում, ոգտագործված են մեր ժողովրդական յերգերի առանձին վոճերը, դարձվածքները, ամենաշատը առանձին քառյակներ միայն; իսկ ամբողջական հղացումը հեղինակն ինքն և ստեղծագործում և այն ել այնպես, վոր մարդ հաճախ դժվար ե տարբերում դա բուն ժողովրդական յերգից: Ի միջի այլոց նշենք, վոր թուժմանյանին հակառակ՝ իսահակյանը ժողովրդական ստեղծագործությունը, նրա բառ ու բանը ոդ-

*) «Գրական թերթ» 1936 թ. № 5

տապործում և վորպես միջոց իր սեփական ապրում-ներն ու զգացումները արտահայտելու համար (մի հանգամանիք, վոր նույնպես ուրվագծում և նրա զրական դիմանկարը) բայց վորովինու իր մեջ պնեսող խտացրել է ժողովրդի հոգեբանությունը, նրա բնորոշ գծերը, ուստի իրեն յերգելով հանդերձ՝ Խահականը այդ յերգերում միաժամանակ ժողովրդին և ցրցարերել՝ հարազատ մնալով նրան։

Խոսք չի կարող լինել այն մասին, վոր ինչպես Հովհաննիսիքանի, Աղայանի թումանյանի և այնպես ել Խսահակյանի խնդրո առարկա մշակումներն ու ժողովրդական յերգերի վորով գրվածները մեծ մասամբ գեղարվեստորեն ավելի ամբողջական ու գողտրիկ դործեր են դուրս դալիս, քան բուն իսկ ժողովրդական ստեղծագործությունները։ Ինքնին հասականալի յե, վոր յեթե ժողովրդական ստեղծագործությունը գեղարվեստորեն ավելի բարձր և անզործությունը գեղարվեստորեն ավելի բարձր և անզործությունից սակագործերը, այն ժամաները, քան դրա վերամշակումները, այն ժամանակ ումն ելին պետք բուն ժողովրդական ստեղծագործությունից սակագործեք այդպիսի յերկրորդ վաճառքամբուծությունը։

Խսահակյանի ժողովրդական ստեղծագործությունների վորով գրված յերգերում՝ ի շարս մի քանի այլ մոտիվների (սիրո, աշխատանքի և այլն) տեղ են դտել նաև պանդխոտության հետ կապված կարոտի յերգեր։

Սոցիալական այդ չարիքը, վորովիսին և պանդխոտությունը, տարագրությունը, նոր յերկությունը

չեն մեղանում։ Այն աբձագանք է դտել մեր տակավին 13-14-րդ դարերի մի շարք հայրեններում։

Անցյալ դարի 80-ական թվականներից պանդընությունը հսկայական չափերի յև հասնում մեր Երականության մեջ, վորի հետևանքով թե մեր ժողովրդական յերգերում, թե զբականության մեջ ծայր էն առնում պանդխոտության հետ կապված յերգերը։

Նույն այդ թվականներին եր, վոր Անդրկովկասի հասարակական-քաղաքական կյանքում գործոն դեր ունեցին խաղալ զեւ 70-ական թվականներից յերեացող արդյունաբերական կապիտալիզմի «առաջին ծավակները»։ Քաղաքաներում, այստեղ ու այստեղ սկսեցին լսվել գործարանների չչակների սուլոցները։ Յերկաթուղին ցանցել սկսեց այնպիսի առևտրաբարդյունաբերական կենտրոնները ինչպիսիք եյին՝ Թբիլիսին, Բագուն, Յերևանը։ Արդյունաբերական կապիտալիզմի հաղթարշավն եր այդ, վոր սկսում եր մի կողմից բնության գեղեցկությունները յեղծել իր առականյալ չնչով, մյուս կողմից քայլայել գյուղական նահապետական բարք ու սարքը։ Դրա հետևանքով յուրեսում, քաղաքաներում սկսվում եր ծայր առնել աղքատությունն ու պանդխոտությունը։ Յեվ հիրավի՝ քայլայման, պանդխոտության, աղքատացման այդ պրոցեսները չատ արագությամբ եյին կատարվում 80-90-ական թվականներին Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի գյուղերում։ Գյուղացին իր «թղաչափ» անջրդի և անբերրի հողից ստացած փոքրիկ հասուրթի մեծ բաժինը տալիս եր «ամպի պես գուացող» պարտատերերին և ինքը մնում ձեռնունայն։

իամ ինչպես իսահակյանն եւ ասում «Մերկ ի մոլեն», այն աստիճան, վոր յեթե «թոնիը զցեյին շորահոտ չեր դա»: Ի՞նչ եր մնում անել վերահաս սովոր խու սափելու համար: Թողնել հայրենի գյուղն ու իր «թղաչափ հողը», դրա հետ միասին սիրած յարին և այն ամեն նվիրական ու թանդ բանեըլ, ինչ նարին և ամեն նվիրական ու թանդ բանեըլ, և «քունավեր թոչունի» նման աչքերը հառել ոխտը սարով հեռու» գորչ քաղաքների կապարե հոռ «ոխտը սարով հեռու» գորչ քաղաքների կապարե հոռ թիղոններին: Յեկ ահա իր ոջախից ու սըրտով սիրած ցավով պոկելով, պանդուխտի ցուալը ձեռքն ածից ցավով պոկելով, պանդուխտի ցուալը ձեռքն ածից գյուղացին իր վիճակն եւ վողբում, կարոտի հուղիչ յերդը շրթունքին:

Պանդուխտությունն ավելի մեծ չափերի սկսեց հասնել 90-900-ական թվականներին, յերբ հանդես եր հեկել իսահակյանը: Բնականաբար այդ պատմաշըրտյակել իսահակյանը: Բնականաբար այդ պատմաշըրտյակել իսահակյանը ավելի քան իր ավագ գրչակիցները (Հովհաննիսյան, Թումանյան) ցավով պիտի յերգեր իր վաթանի, իր ոջախի, իր սիրուհու կորուստը վողեացող գյուղացու վիճակը և նրա «յերդերը» իր անձնական «վերքերը» պիտի համարեր:

Այդ յերդերում իսահակյանի անհատական, «սըրտային» տարրը շատ ուժեղ եւ յերեան յեկել: Զե՞ վոր հարանման ապրումները ծանոթ են յեկել «ոխտը սարաւողը», «ոխտը տարով» յարից ու հայրենիքից բաժան ըստին և ապատեղծին ել: Այդ եւ պատճառը, վոր պոկետին հաջողվել եւ ամենախոր կերպով վերալտադրել պանդըստության մեջ գտնվող գյուղացու հոգեկան ապրումները, նրա կարոտի բովանդակ գլացումը.

Ոխտը սարով հեռու քեղնից,
Քո շրվաքով ապրում եմ, յար.
Ոխտը տարով բաժան քեղնից
Քո կարոտով երվում եմ, յար:

Մենակ պանդխտող գյուղացին չե, վոր մեռնում եր իր յարին տեսնելու անձկությունից: Նույն վիճակը և ապրում և տանը նստած գեռատի սիրահար կըն եւ պարունակությունից: Սա ևս իր յարի կարոտն աչքերի մեջ պահած ունի և նույնպիսի անձկությունը սպասում է սահածած մի» ստանալ իր պանդխտից, սակայն նրա «խարբիկ մի» ստանալ իր պանդխտից, սակայն նրա սպասումներին ի դերեւ են յելնում, անցնում եւ ցուրտ ձմեռը, բացվում են ճանապարհները ու դարձյալ խաւար չի գալիս անձկալիկից.

Զմեռն անցավ, յեկալ գարուն,
Հալավ բարձրիկ սարերու ձյուն,
Ճամբար բացվալ դարիբներուն.
Աչքս ճամբին՝ դաղար չկա:

Ինչ եւ մնում այս բոլորից հետո իր դարիք դուրսի դարձը տեհնչացող գեղջկուհուն, յեթե վոչ աբցունքի հեղեղներ բաց թողնել աչքերից:

Զուրն եւ պրծել՝ կուզա սարեն,
Սարեն, ձորեն... իմ աչքերեն...
Մի նորոգիր սրտիս յարեն,

Դարձիր վաթան, հողն անուշ ե,
Հողն անուշ ե, ջուրն անուշ ե:^{*)}

Բանաստեղծ Իսահակյանն այստեղ վաթանի, հո-
ղի անուշության դաղափարին ե զնում, վոր առկա յե-
նակ բուն ժողովրդական յերգում: Այս՝ վաթանի հողն
անուշ ե, բայց սակալ ե, «թզաչափ» ե, անջրդի
յե ու չի լինում նրանով ապրել, յերբ այդ հողի հա-
սույթից իր բաժինն ե ուզում նաև անաշխատ ոհսը:
Այլու հանդերձ, համեմատաբար ավելի «բախտավոր»
վիճակի մեջ ե գեռես հայրենի հողից չըկտրված,
կորդ յերկիրը վարող արեակեղ ճակատից ծովի պես
քրտինք թափող մածկալի և նրա յարի դրությունը:
Եսում ենք բախտավոր, վորովհետեւ մայր յերկրում
նա տակալին ծխացող ոջախ ունի (վոր կյանքի սիմ-
վոլ և համարում ժողովուրդը) և իր կողքին կանդնած
առանին աշխատանքների լնկեր, հոգատար ու սիրող
մի կին: Այդ կինն ե, վոր իր ջանրեղար մաճկալին

*) Իսահակյանի այս յերդի և ժողովրդական քառյակի
համեմատությունից, վոր բերում ենք այստեղ, կարելի յե,
իմանալ, թե ինչպես եր մշակում Իսահակյանը ժող. յերդեր:

Զուրը պրծել, կուգա սարեն,
Կուգա, թափի մարմար քարեն.
Զի սաղցուցեր սրտիս յարեն,—
Յարն ա դարձել իր երդարեն:

Էանթող ե առաջարկում որվա հոգնատանջ աշխատան-
քից.

Մաճկալ ես, բեղարած ես,
Առը չուռ տուր, չուռ արի.
Ծովի պես քրտնած ես,
Յեղներն արձկի տուն արի:

Կաթի սերը քաշել եմ,
Դրել եմ հովին՝ սառի,
Ալ գոգնոցս կապել եմ,
Արի թառլան թը՛ռ արի:

Դարձած բեղարած յար ջան,
Ամպելն յելան դե արի՝
Բեղարած ջանիդ զուրբան
Ծտից թև առ—թեղ արի:

Իսահակյանի ժողովրդական ստեղծագործություն-
ների վորով գրված վոտանավորներում տեղ են գտնել
նաև հայ գյուղացու չքավորական կյանքին վերաբեր-
վող մի շարք բանաստեղծություններ: Այս կարգի
ժողովրդական մոտիվներում Իսահակյանը յերեան ե
հանել գյուղացու կյանքի լավատեղակություն: Բա-
նաստեղծը, ինչ խոսք, կարողանում ե դեղարվեստա-
կան խոսքի միջոցով կենդանագրել, նկարել ամբող-
ջական տեսարաններ ու մանրամասներ: Իսահակյանի

ժողովրդական մոտիվներում տեղ են դառել նաև որն ի
բուն գատող հայ զեղջուկի քեֆ ու ուրախության
յերգերը տոս որէրին (Տես «Ընկարակալուրք սեղ» վրա»
և այլ բանաստեղծությունները):

Ավետիք Խսահակյանը ժողովրդական յերգերի
վողով գրված իր յերգերում այն աստիճան և
մոտեցել ժողովրդական լիրիկայի հորինվածքին, մը-
տայնությանն ու զգալակերպին, վոր նրա այդ կարգի
բանաստեղծությունները թվում են «անանուն յերգիչ-
ների ստեղծածները՝ նոր ժողովրդական յերգերի սե-
րիայով»*):

Յեկ հիրավի մեր ձեռքի տակ փաստեր կան Խսա-
հակյանի ժողովրդական յերգերի վողով գրվածների
մասին. այդ յերգերն այնքան ե ժողովուրդը յուրաց-
րել, վոր յերբ շիրակցի դյուղացուն, հարցը են, թե
ո՞վ ե հորինել նրա ծոր տված յերգը, նա փոխանակ
յերգի խկական հեղինակ Խսահակյանին մատնանշե-
լու, ինքնակոհ ասել ե. մերն ե (ժողովուրդինը),
խկ յերբ Խսահակյանի անունն են տվել՝ շիրակցու
«Հավատալը չի յեկել»: Դա, ինչպես Բրյուսովն ե ա-
սում, «Ամենաբարձր պարզեն ե, վորի մասին յերա-
դել միայն կարող ե պոետը»: Բրյուսովից առաջ
իելինսկին ել նույն այդ բանն ե համարել գրողի ա-
մենամեծ վարձատրությունը: Կոյլցովի մասին խոսե-

*) Վ. Բրյուսովի խոսքերն են:

լիս՝ մի այլ կապակցությամբ նա ասել ե. «Յեկ կդա-
յամանակ, յերբ Կոյլցովի յերգերը կանցնեն ժողո-
վրդի մեջ և կերդվեն բովանդակ Ռուսաստանի ան-
տահման տարածության վրա, ինչպես կմտնեն ժողո-
վրդի մեջ և անդիր կարվեն Կոյլովի առակները»*):
Բելինսկին իհարկե չսխալվեց իր գուշակությունների
մեջ, Կոյլցովի յերգերն ու Կոյլովի առակները հեղի-
նակների մահից հետո տարածվեցին բովանդակ Ռու-
սաստանում և դարձան ժողովրդի սեփականություն:
Խսահակյանն այդ փառքին արժանացավ տակալին
տարիներ առաջ: Այն, ինչ հեռավոր գալիք եր լինե-
լու ոռու գրողների համար կենդանության որոք, ի-
սահակյանի համար շողօղում եր ինչպես վաղորդյա-
նը:

Այդ բոլորից հետո հոգ չե, թե մեր քննադատո-
ների մեջ գտնվել են մարդիկ, վորոնք Խսահակյանի
հեշտա յերգերի մասին գրել են, թե. «Հայ ժողո-
վրդական քառյակների հետ համեմատելով միան-
գամայն կեղծ են, նա չափը և հանգը և՛ ընդունում
ե, և՛ չի ընդունում»**):

Այս տողերի հեղինակն է վոչ անհայտ հայ
դրադատ Մամբրե Մատենճյանը, վորը մեր քննա-
դատական գրականության պատմության մեջ հայու-
թամայն իբրև իիստ միտումնավոր քննադատ: Նա իր
նի յե իբրև իիստ միտումնավոր քննադատ:

*) Сочинения В. Г. Белинского. Т. IV, с. 420
1901 г.

**) «Հորիզոն» 1913 թ. № 55 Մ. Մատենճյանի յելութի
ողաբերից:

ժամանակ խստագույնս «պատժել ե» և՝ Վահան Տերյանին, և՝ Շիրվանզարեցին, առաջինին համարելով՝ Պոլ Վերլենին յերկրորդող «անհատականությունից զուրկ» մի բանաստեղծ, իսկ յերկրորդին ել հայտարարելով Սունդուկյանին ընդորինակող :

Այն հարցին, թե ստեղծագործների վո՞ր տիպին ե պատկանում Խսահակյանը, մի չնչով գրողների, թե՞ չնչելով գրողների, ապա նկատի ունենալով նրա բանաստեղծությունների տարբեր հրատարակությունները՝ կարող ենք ասել, վոր Խսահակյանը յերկրորդ տիպի գրողներին ե պատկանում։ Այս խնդրում մեր բանաստեղծն իր յերեմնի ուսուցիչ Հովհաննիսյանի հակապատկերը լինելով, նմանվում ե գըրչակից Թումանյանին։ Հայտնի յե, վոր Հովհաննիսյանը իր բանաստեղծությունները մեկ անգամ լույս ընծայելուց հետո այլևս չառ քիչ եր մշակում։ Յեթե վորոշ վոտանավորներ գաղափարապես կամ կատարման արվեստով չեյին գոհացնում Հովհաննիսյանին, ապա նա այլպիսի վոտանավորները ավելի շուտ վոչ թե վերախմբագրում ու վերամշակում եր, այլ առանց այլեալի դուրս եր թողնում իր կազմած նոր ժողովածություն։ Այսպէս չեյին վարդում իրենց նույնիսկ տպագրված գործերի հետ Թումանյանը, Տերյանը և Խսահակյանը, վորը Թումանյանի նման իր գործերը մշակում եր թե՛ լեզվական, վոճական և

թե՛ բովանդակության տեսակետից։ Մի քանի բանաստեղծություններ հազիվ ունենա Խսահակյանը, վորոնց «կուսությունը» խախտված չլինի, իսկ մնացածները շարունակական մշակման յենթարկվելով՝ պատառվում եյին ավելորդություններից և մեծ մասամբ դառնում կուռ ու կոփ հղացումներ։ Այսպես որինակ՝ 1903 թվին հրատարակված բանաստեղծությունների ժողովածուի մեջ տեղ գտած այս քառասողը, ինչպես ժողովածուի մեջ տեղ գտած այս քառասողը, ինչպես

Ալագյաղը թագը գըլիսին։
Ամպերու մեջ նստել ե,
Հանց թագավոր մարմար դահին,
Սարերըն վեր բազմեր ե։

(1903 թ. հրատ.)

Ալագյաղը աստղերու մեջ,
Աղամանդե թագը գըլիսին.
Սարերեն վեր, ամպերեն վեր,
Թիկըն և տվել զըմբուխու դահին։

(1908 թ. հրատ.)

Մի այլ բանաստեղծություն («Շղարչ ամպեր յերկինք առան») յերեք վարիանտ ունի։ Յերբ այդ բանաստեղծության տպանին հրատարակությունը հա-

մեմատում ենք յերկրորդ և յերրորդ հրատարակությունների հետ, պարզ տեսնում ենք, թե ինչքան մը տածված ու խնամքով է մշակում պոետն իր գործերը: Հաճախ բանաստեղծն այնպիսի նրբությունների յետև ե ընկնում, վոր կարծեք թե «ավելորդություն» ե: Այսպես որինակ՝ իր հիշյալ վոտանավորը տարբեր անդամներ հրատարակելիս բանաստեղծին յերկար ժամանակ զբաղեցրել ե այսպիսի մի «չնչին» բան՝ բնչչպես ե լավ ասել «նուրբ յեղեղը կը դողա», թե «յեղեղը նուրբ կը դողա»: Տպագիր վոտանավորների վրա այսքան աշխատանք կատարող պոետի լարուրատորիան մեզ հայտնի յե, իսկ թե ձեռագրերը ինչքան են մշակվել անդամահատվել այդ արդեն ինքը զիտե: «Շելլերը— ասում ե Գյոթեն, — իր պոեմի 22 տունը զարձել ե 7 և ստեղծագործությունը վոչնչով չառժեց այդ սարսափելի վիրահատումից, ընդհակառակին, այդ 7 տներում զարժանալի կերպով լավ պահպանվեցին 22 տան մաքերը»:*)

Այսպիսի «անդամահատման» հաջող վախճանն ինքնին վկայում է հեղինակի ձիւթը: Ինչը չնշելու և ինչը թողնելու այդ դժվարին գործին ծանոթ ե և իսահակյանը:

Իր ապրումներն ուրիշին հաղորդել կարենալու կարեռ գործոններից ե լեզուն: Այդ զենքը միշտ

հասուր յե պահում իր ձեռքում պոետը: Իսահակյանի լեզուն փարթամորեն հարուստ լեզու յե, վոճը ինքնատիպ: Վոճը, վոր հեղինակի, տվյալ դեպքում իսահակյանի, զեղարվեստական դիմանկարի արտահայտությունն ե, զեալապես կրում ե պոետի անհատապաշտական աշխարհայոցողության կնիքը: Այսպես որինակ՝ իսահակյանի «յուրաքանչյուր նախադասությունն, — ճիշտ կերպով նկատում ե ընկ. Հակոբ Հարությունյանը, — ունի իր ուրույն անհատականությունը և ձգտում ե մենակ աղղելու: Այնպես վոր կարելի յե վորոշ նախադասություններ դուրս բերել վորպես աֆորիզմ: Ամեն մի նախադասություն կազմում ե մի կենդանի բջիջ, մի մոնադ, վոր կարող ե ինքնուրույն կյանք ունենալ, առանձին ինքնամփոփ և ինքնարավ ամբողջականություններկայացնելով: Թեև այդ նախադասությունը ամերող յերկի մի մոմենտը, մի յերանգը, մի դիճն ե պատկերացնում, սակայն այնպես հատու, չեշտված ձևով, վոր կարող ե դիտվել իբրև ուրույն, ներքուստ ավարտված մի գեղարվեստական միավոր... Իսահակյանի վերաբերմունքը զեսլի բառերը նույնին ե ինչ զեսլի նախադասությունը: Նրա բառերը, թե՛ իրենց իմաստային պատկերացումների բովանդակությամբ և թե՛ իրենց հնչակագով ունեն յուրահատուկ տպագորություն, ուրույն՝ առանձնապես չեշտված աղղեցություն: Նրա բառերն ել պայթում են անմիջական հուզական և գունեղ զդայական լիցքից»:

Լեզվական և վոճական այդ հատկությունների հետ մեկտեղ պետք ե չետքել իսահակյանի բանաստեղծական լեզվի նվազայնությունը ևս: Իսահակյա-

*) «Разговоры Гете» Собранные Эккерманом, С.-Петербург, 1891 г. стр. 289.

Նը աշխատել է համապատասխան հնչյունների կրըկ-նությամբ վերաբաղրել նկարադրվող յերեվույթի բնաձայնը (տես «Լուս պարտեզում որտարուի սիրատենչ» բանաստեղծությունը և ուրիշները):

Իսահակյանի հղացումների այս յերաժշտականությունը, ներդաշնակությունը դյութել է հայ լավագույն կոմպոզիտորներին և մղել ձայնադրելու նրա բանաստեղծությունները: Իսահակյանի այնպիսի վուտանավորները, ինչպիսիք են «Շափաղ կուտաս», «Հովերն առան», «Մաճկալ ես բեզարած ես», «Դիշերըն եկալ», «Աև մութ ամպեր», «Ա՛խ մեր սիրտը», և շատ ուրիշները ձայնադրել են հայ կոմպոզիտորները և յերգվել ու յերգվում են ամենուրեք...»

Իսահակյանի արտահայտչական դեմքերից մեկն ել պատկերավորությունն ե: Նրա ստեղծած պատկերները մաշվելու չափ գործածված չեն, դրանք պոետի սելիական մտքի ծնունդ են, նրա բանաստեղծական «զառ ու զարմանք յերազներից» պոկլած վառ յերեվակայության արդասիք: Իսահակյանն այստեղ ել պատրաստին չի փնտրում, լավ իմանալով, վորագիմերը դժվարության չափով զին ունին:

Յերբ բանաստեղծը փորձում է համեմատությունների դիմել, միշտ հաշվի յե առնում տվյալ յերեվույթի կամ առարկայի բնորոշ (նրա կոչումը, տարերքը կազմող) հատկանիշը: Յերկու իրար բաղխվող ուժերի հղորությունը ցույց տալու համար, իսահակյանը ուրիշ բանաստեղծների նման, յերբեք չի համեմատելու:

Բատի դա «յերկու շարժուն սարի հետ»: Ճիշտ ե սարի պատկերը թեև արտահայտում է վիթխարի, ծառացած ուժի դաղափար, սակայն նրա կոչումը «վաղել» կամ «շարժուն» լինելը չի, այլ հավերժութեան անշարժ վիճակում մնալն ե: Ստորև բերված «Հոտըն ու հովիվը» բանաստեղծության մեջ մենք կըտեսնենք սարի, ժայռի իսկական դերը: Արագածի թարանջերին թափառող սիրուց լըլած մի պատանի թախանձել է աղբյուրներին ու ժայռերին, «Վոր լինելին իրեն ընկեր անմեկին»: Աչա թե ինչ են պատասիանել իրենց կոչումը դրսևորող աղբյուրներն ու ժայռերը.

Աղբյուրները հառաջելով ասացին.

«Գնացող ենք, ի՞նչպես մնանք մենք քեզ հետ».

Եեվ ժայռերը հառաջելով ասացին՝

«Մնացող ենք, ինչպես գնանք մենք քեզ հետ»:*)

Վոչ սարերն են այստեղ «շարժուն», և վոչ ել աղբյուրներն են «անշարժ»:

Իսահակյանի ուժը իր պատկերների թանձրության մեջ ել է: Պոետը հաճախ սոսկ մի պատկերով ամբողջական դաղափար և արտահայտում: Գարնան դալը արտահայտելու համար նրան հարկավոր չեն շատ խոսքեր չուայլել.

Ե՛յ կանաչ աղբեր, դու բարով յեկար,

Դու բարով յեկար, իմ կանաչ աղբեր:

*) Տե՛ս «Խորհրդային դրականություն», եջ 98, 1938 թ.

Առաջին իսկ տողն արդեն լիովին հնարավորություն և տալիս մեզ հասկանալու, թե ով և «կոնաչ աղբերը»։ Յերկրորդ տողը, վոր առաջինի Աջլուծ ձեզն ե, կրկնություն ե և նպատակ ունի միայն ուժեղացնել առաջին տողի նույն միտքը։ Մեկ ուրիշ բանաստեղծ, յերեկի վոչ միայն մի տողի, այլ և մի քառյակի ու մի ամբողջ յերգի մեջ չկարողանար գարնան գալն այսպես վորոշակի կրբալով առտահայտել, ինչպես այդ մի պատկերով «կանաչ աղբեր»-ով հաջողվել ե տալ իսահակյանին։ Իր տիեզերական զանդը բանաստեղծության մեջ իսահակյանի վառ յերեակայությունն այսպիսի գըանտիոզ ու տեսակում բացառիկ պատկեր ե ստեղծել։ Տիեզերքը նրա մոտ պատկերվել ե վորպես հսկայակերպ մի զանդ, իսկ պոետի հոգին նրա վսեմ լեզվակը, վոր զարնվելով տիեզերական զանդի պատերին իր քաղցրալուր զողանչներն ե տարածելու մեղսում աշխարհի վրա, այդ զողանչներն իր իսկ պոետի յերերն են։ Պատկերներ են սրանք, վոր զբոշմվում են մարդու հիշողության մեջ և այլու չեն մոռացվում։

Իսահակյանի պոեզիայի պատկերավորության մասին շատ կարելի յե խոսել, բայց բավականանանք ևս մի նմուշ բերելով, վորը վերստին ու վերստին ապացուցում ե, վոր իսահակյանը վոչ միայն յերաժիշտ ե, այլ և մեծ նկարիչ։ Յեկ իսկապես ի՞նչ եսա, յերգ, թե նկար, գրչի, թե վրձինի գործ։

Եղարչ ամպեր յերկինքն առան,

Լուսնյակն անդորր կը ողա,

Լոիկ ճահճում՝ հարհանդ-մարմանդ,

Նուրբ յեղեղը կը դողա։

Արագիւը մենակ ու լուսի,
Յեղեղնի մոտ կը քայլե—
Կը մտորե՝ խոր ու տիսուր,
Ճահճն աղոտ կը փայլե։

Այս բոլորից հետո ասել, թե «Ավետիք իսահակյանը բնության պատկերներ շատ քիչ ունի, նա չենկարում, այլ նկարելիս ել յերգում ե»*) նշանակում ե կարճատես լինել, չտեսնել այն իրոք ճոխ ու շուայլ պատկերները, վոր սփուած ունի իսահակյանըն իր յուրաքանչյուր յերգ ու տալի մեջ։ Եսենք և այն, վոր պոետի պատկերավոր մտածողության մեջ յերեվան ե զալիս նրա ժողովրդի նման մտածելու ատայնությունը։

Արևն հասավ սարի գլխուն,
Դար ու դաշտում լույս չկա,
Հավք ու թռչուն մտան խոր քուն,
Ալս, ինձ համար քուն չկա։

Լուսնյակն ընկալ յերգիկից ներս,
Կշեռքն յելալ յերկնքում,
Զով հովերն ել մթնչողնս
Աստղերի հետ են զրուցում։

Ցորեկն յեկավ, վոչիսարն յեկավ
Աղիկ բալես քընած մնաց։

*) «Մուրճ», 1904 թ. № 3, հջ 148.

Քաղաքային մարդու հոգեբանություն ունեցող
պոետը այսպես չի կարող մտածել: Տերյանի պատ-
կերավորության մեջ այսպիսի բան չեք գտնի: Խա-
հակյան, Թումանյան, Հովհաննիսյան և այլ՝ ժողո-
վլրդի նման մտածող պոետներն են, վոր դիտեն այս-
պես արտահայտել վրա հասնող դիշերվա պատկե-
րը:



Բանաստեղծական խոսքը զորեղ ու տպավորիչ
դարձնելու համար լավ հանդեր կազմելու ձգտու-
մից, յերաժշտականությունից ու պատկերավորու-
թյունից բացի՝ Խահակյանին ուրիշ միջոցներ ել են
հայտնի: Այդ միջոցներից մեկն ե կրկնությունը,
վոր ժող. յերգերին ու աշուղական խաղերին ե հա-
տուկ: Լավ ծանոթ լինելով վերջններիս պոետիկա-
յին՝ Խահակյանն ինքն ել, նորատակով կարողանում
ե նույնական կրկնությունների դիմել, վորոնք վոչ
թե տաղոտուկ են առաջացնում, այլ ալելի զորեղ ու
տպավորիչ են դարձնում գեղարվեստական խոսքը:
Բերենք մի որինակ.

Սըրտի մեջն ե կյանքը մարդուս,
Սիրտը վոր կոտրալ կյանքն ինչ պետք ե.
Սերս մարավ, աստղը սրտիս,
Աստղը մարավ, սիրտը ինչ պետք ե:
Աղիղ մի սիրտ սերը կուզեր
Փուճ աշխարհը անկամորթ ե:

Կրկնությունը, ինչպես տեսնում եք, վոտանավորը
թուլացնելու, տպավորությունը վանել տալու տեղ
ավելի յե սրում մեր ուշադրությունը, վորովհետեւ
յուրաքանչյուր անդամ կրկնվող բառը նոր իմաստ,
նոր միտք ե հաղորդում ընթերցողին: Իր գեղար-
վեստական խոսքը դիպուկ ու տպավորիչ դարձնելու
համար, Խահակյանը դիմում ենակ զուգադրության
(պարալելիզմի) և հակադրության սկզբունքների կի-
րառմանը, վոր նույնական ժող. յերգերի սուետիկա-
յին և հատուկ: Խահակյանն այս սկզբունքներն ող-
տադրությում ե իր ժող. յերգերի վորով դրած տա-
գերում: Վո՞րն ե զուղահեռականության սկզբ-
րունքը: Բանաստեղծը բնության յերկույթներից վերց-
րած վորես պատկեր նկարագրելով, իր յերգի առաջին
մասում, յերկրորդ մասում այդ պատկերին դրւզա-
գերում ե իր հոգեկան վիճակը: Յերգի հիմնական ի-
մաստը յերկրորդ յերկատողումն ե, իսկ առաջինը հա-
մեմատության որյեկտն ե: Յերենք ժող. յերգի մի
որինակ.

Գարուն ա, ձյուն ա արել,
իմ յարը ինձնից ա սառել:

Ավելի քան պարզ ե բնության այս յերկույթների
հարաբերությունը պոետի հոգեկան հար և նման վի-
ճակի հետ: Առաջին տողը տալիս ե բնության, յես
կասեի, մի արտառոց պատկեր: Գարունը, վոր սո-
վորաբար իր չերմությամբ ծլեցնում ե հունդը հո-
ղում ու ծաղկում ե ամեն ինչ, բնության այդ կեն-
դանության ու զարթոնքի ժամանակ հանկարծ ձյուն
դանության ու զարթոնքի ժամանակ հանկարծ ձյուն

և գալիս, և մեռնում ամեն ինչ: Բնության տյա անըսպասելի, հանկարծական, դաժան ծաղրը միանդամայն համապատասխանում և պոետի ներքին աշխարհում կատարված նման անսպասելի յերեսութին: Յերգչի սրտում, ուր նույնպես դարուն եր, սեր եր ծլեւու պետք ե փթթեր, մինչդեռ հանկարծ նույնպես անսպասելի կերպով նրա յարը սառչում ե իրենից: Ինչ խոսք, վոր ողոետի հոգու վրա ել ձերմակն ե նրտում, ինչպես այն ձյունը կանաչ դաշտի վրա: Այս զուգահեռականության սկզբունքով են ստեղծագործակած իսահակյանի մի շարք յերգերը.

Թափվեցին տերեներն աշնան ծառերի
թոշնած ու դալուկ:
Թափվեցին յերգերս բեկված իմ որտից
տրտում ու թալուկ:

Ինչպես վոր ուշ աջունքին բնության մահացման հետ չորացած ծառերից թափվում են դալուկ թոշնած տերեները, այնպես ել բանաստեղծի բեկված որտից թափվում են տրտում ու թալուկ յերգերը:

Այստեղ ել վոտանավորի եյական մասը, բուն իմաստը յերկրորդ տողն ե, իսկ առաջին տողը յերկրորդի լրացումն ե, նրա համեմատությունը: Այսպես ե կաղմվում, ինչպես ասինք, զուգահեռի սկզբունքը, իսկ հականդրության դեպքում բնությունից մի պատկեր ե առնում հեղինակը և առաջականացնելու մասին մի ուրիշը, վոր պոետի հոգեկան վիճակից ե բղիում և միանդամայն համապատասխան և նրա ներքինին.

Արտօւտն անուշ յերգում ե սեր,
Սիրտս լուռ ե քանց ձմեռ.
Ես ինչ կարմիր վառ արև ե,
Սիրտս մութն ե քանց դիշեր...

Ժողովրդական յերգերի պոետիկայից, ինչպես ասինք, հսահակյանն ողովում եր այն ժամանակ, որը ուսա վոգուն համապատասխան յերգեր եր գըրում: Այլ բանաստեղծություններում, ուր քաղաքացին հոգեբանություն ունեցող մարդու բարդ ապրումները պետք ե դրսեվորել, պոետն իհարկե խուսափում եր գունեղ պատկերներից, չեր ողագործում ժողովրդական առանձին վոճեր, այլ մոտենում եր յերանգների մեջ տարբերություն մտցնող Տերյանի լեզվին, ողմանտիկների, սիմվոլիստների արտահայտչական յեղանակներին: Միուլ բանիվ իսահակյանը շական յեղանակներին: Վիուլ բանիվ իսահակյանը շիտե, վոր ամեն յերգ իր բառերով ե յերգվում: Յեւլ վոչ միայն այդ, նա գիտե նաև, վոր ամեն յեր յեղանակն ու նվազի հատուկ գործիքն ունի: Յերբ բանաստեղծը (հազվադեպ պարագաներում) միտիկական տրամադրություններ ե արտահայտում, ձեռք ե զարկում յերգեհոնին: Միուլիստական, ողոմանտիկական մոտիվներ հնչեցնելիս ձեռք ե առնում լացող թակ ջութակը և այսպես յերգում.

Լորիների տակ
Մտորում եմ լուռ.
Հեռուն մի ջութակ
Հեծում ե տխուր:

ժող. յերդի վողով գրված խաղերն ասելիս, «դա-
սարգուն աշուղի» նման բանաստեղծը սաղ-քյամանչա,
կամ սրինդ եր ձեռքը առնում ու ծոր տալիս «վարդ
Շիրազի բայաթին»:

Ասում են անթերի, աստվածային հեղինակներ
չկան, և դա ճիշտ է: Շեքսայիրի ստեղծագործու-
թյուններում անդամ թերություններ են նշում նրա
լավագույն մեջնաբանողները: Մեր իսահակյանն ել,
մանավանդ իր գործունեցության վաղ շրջանում, ստեղ-
ծագործել ե նաև թույլ գործեր, հիշենք որինակ
«Ընկերիս», «Բայց յես վողի յեմ» և այս կարգի այլ
յերգեր: Սակայն նման բանաստեղծությունների
թիվը իհարկե շատ ե նվազ: ուստի դրանք վորեե
կերպ չեն կարող ստվեր ցեցել պոետի անդուդական
բանաստեղծությունների վրա:

Իսահակյանի ստեղծագործությունների գաղա-
փարական կողմի, ինչպես և արտահայտչական մի-
ջոցների (պատկեր, լեզու, զուգահեռականություն և
այլն) քննության հետ մեկտեղ ուշադրության ար-
ժանի յե մեր պոետի ստեղծագործությունների տա-
ղաչափությունը ևս: Թե ինչքան մեծ նշանակություն
ունեն բանաստեղծական ստեղծագործության մեջ
չափը, ոիթմը և նման «ձեսկան» հանդամանքները,
այդ մասին հետեւյալն ե ասում Գյոթեն.

«Պոետական տարբեր ձևերից խորհրդավոր կեր-

պով կախված են առաջին տպավորություններ: Յե-
թե իմ հռոմեական յեղերերկությունները վերադա-
սավորեն բայրոնյան «Դոն Ժուան»-ի չափով և տո-
նով, ապա դայթակղեցնող տպավորություն կսաց-
վի դրանցից»*):

Յեթե յեղերգությունը չափի փոփոխման հե-
տևանքով կարող ե գայթակղեցուցիչ տպավորություն
թողնել մարդու վրա, Բայրոնի «Դոն Ժուան»-ի նման,
ապա հասկանալի յե թե ինչքան ե «յերկրորդական»ձև
ասածը: Գյոթեյի այս խոռքերը վկայում են, վոր
մանաստեղծության ձևից, չափից շատ բան ե կախ-
մանաստեղծության ձևից, վոր յուրաքանչյուր կոնկրետ բովանդակություն
ված, վոր յուրաքանչյուր կոնկրետ պահպանչություն:
դրսերման համապատասխան ձև ե պահանջում:

Մենք պիտի փորձենք ցույց տալ, վոր իսահակ-
յանին մեծ մասամբ հաջողվում ե այդ: Նա ներ-
դաշնակություն և վորոնել և հաջողվել ե գտնել այդ
ներդաշնակություն: Պետք ե ասած, վոր իսահակյանը,
ինչպես և մեր այլ սակավաթիվ վարպետ բանաս-
տեղծներ, հաշվի ելին առնում և մեր լեզվի ընձեւ-
նած հնարավորությունները, ըստ այժմ և քնարեր-
դած իրենց հույզերը: Պրոֆեսոր դոկտոր Մանուկ-
յանը այդ առթիվ նկատում ե հետեւյալը՝ «Ետ-
Արելյանն այդ առթիվ նկատում ե հետեւյալը՝ «Ետ-

*) «Разговоры Гете», собранные Эккермано, С. Пе-
тербург, 1891 стр. 91.

ոիթմական վոտքի մեծ կազմվածք լինի մեծասար (քորեռս կամ տրոքեռս) կոչված բառական վոտքից, բայց մեր լեզվի մեջ այդպիսի բառերի կամ բառական վոտքերի թիվը շատ սահմանափակ է*):

Նկատենք և այն, վոր իսահակյանը չի հորինում նաև գակտիլական և քողարորը վոտքերով վոտանավորներ նույնպես վերոհիշյալ պատճառով՝ (մենք մի քանի յեռավանկ բառեր ունենք միայն, վորոնց շեշտը առաջին վանկի վրա յե, չունենք նաև յեռավանկ բառեր, վոր յերկու շեշտ ունենան):

Պատահական չե ուրեմն այն, վոր իսահակյանն իր բանաստեղծությունները մեծ մասամբ ստեղծագործել և ստեղծագործում ե մեր լեզվի ընձեռնած չափերով: Մի յերկու նմուշ բերենք իսահակյանի հաճախակի գործածած չափերից և տեսնենք, թե համապատասխանում ե նրա այդ չափերով հորինված հրացումները տվյալ բանաստեղծության ներքին թերապրանքին: Նախ յամբական վոտանավորների չափով հորինվածներից, վորով հարուստ ե մեր լեզուն. Բայե՛ս / ունի / հընդո՛ւ / մաթա՛,

Վոռկի՛ / որո՛ցք, / ատլա՛ս / ծածկո՛նք,

Պուտո՛ւշ / դարդար, / նըշխուն / բալա՛,

Պածիկ / կենես... / որ որ, լալա՛:

Զորսոտնյա յամբական ութը վանկանի պարզ ու աշխուժ հղացման այս չափը միանդամայն համապատասխան ե վոտանավորի ներքին բովանդակության

*) Պրոֆ. դոկտոր Մ. Աբեղյան՝ «Հայոց լեզվի տաղաչություն», էջ 291:

նը: Նույն չափով պոետը չեր կարող հորինել իր «Եյանքս դալար ու լալազար» վոտանավորը, վորով-չետե ամյալ բանաստեղծությունը նախ պատմողական բնույթ ունի, վորի համար հարկավոր ե շարահյուսական մեծ միություն և ապա այստեղ պոետն իր անցած-դնացած «դառ դարունքվա» կարուն և վողբում, վորին համապատասխան ե իհարկե յամբական քառանդամ տանկվեց վանկանի վոտանավորի դանդաղ չափը (այս սինեմայով՝ $4+4+4+4=16$), վորով և պոետը գրել ե իր այս հղացումը:

Կյանքը դալար /ու լալազար/ /վոռկի որերը/ /^{ո՞ւ} գնացին:
իմ դարունքվա, /դառ դարունքվա/ /վառ ծաղիկներս/ ^{ո՞ւ} գնացին:

Գետը և ասել, վոր իսահակյանից առաջ մեր նոր գրականության մեջ մենակ Պատկանյանն ե այս չափով վոտանավոր հորինել: Իսահակյանից հետո, այդ չափը գործածեցին Տերյանը, և ուրիշներ. սակայն չորս ոտնյա 16 վանկանի յամբական վոտանավորը, վորոշ միունակություն ե առաջ բերում, ուստի համամատաբար մեծ հղացումների համար ձանձրույթ կարող ե պատճառել: Այդ հանդամանքը նկատի ունենալով ե, յերեխ, վոր իսահակյանն իր նույնպես եպիկական տարր պարունակող «Դարդը սրտի» վոտանավորի համար ընտրել ե վոչ թե 16 վանկանի յամբական վոտանավորի հիշյալ չափը, այլ մի վանկով պակաս 15 վանկանի քառանդամ մեկ անապեսով վոտանավորի տեսակը: Այս չափը առաջինի համեմատու-

թյամբ, վոր նկատի յե ունեցել իսահակյանը, այն առավելությունն ունի, վոր տողավերջում փոխում է չափը, վոր ասել ե, թե ցրում է միորինակությունը.

Դարդը՝ սրտիս, /աղքատ ու խեղճ/ | ցուալը ձեռիս, /
գլխակոր.
Շա՛տ տարիներ /պանդուխտ յեղած/ | նորեն դարձա/
հայրենիք:

Իսահակյանի գործածած բանաստեղծական չափերից ե և յոթ վանկանի մի անապեսով ու յերկու մբով վոտանավորի այս տեսակը (սխեմա3+4=3+4):

Ես ճամբեն / ոլոր / մոլոր
Սև ծովի / բոլոր / կերթա,
Շուշան յարս / ինձ թողեր ե,
Են տղի հետ յ ո՞ւր կերթա:

Այս կտըրտված կարճ չափը նույնպես հարմար ո դալիս կեռմաներով ընթացող վոլոր-մոլոր ճանապարհի հետ:

Իսահակյանի գործածած բանաստեղծական չափերից ե և անապեսյան յեռոտնյա իննը վանկանի վոտանովորի տեսակը (այս սխեմայով 3+3+3=9):

Իմ հոգի'ն / տարագի'ր / մի թռչուն
Մըրբիով / զարնվածի, թևաթա'փ,
Հողմերն ե'ն / հեղ գըլիսի'ս / չառաջում,
Եեվ ուղի'ս |անհատնում / և անա'փ:

Սըանք են դլխավորաբար այն չափերը, վոր համախակի գործածում ե իսահակյանը, իր յերգերը, հովվերգությունները, ձոներգները և քնարական այլ տեսակի վոտանավորները գրելիս:

Գալով իսահակյանի հանդ կազմելու արվեստին, (վորից մեծապես կախված ե վոտանավորի ոիթմիկ լինելու հանդամանքը), պետք ե ասել, վոր նրա բանաստեղծությունների մի մասը կազմված ե աղքատ ու միորինակ հանդերից: Այսպես որինակ՝ թագուհի-գուշյնի, բույն-փայլուն, փիրուղ-վոսկեհույս, կախաղան-անձայն, կախաղան-ունայն մտա-տատասպայա, լավանա-կա, քաղի-քամի, մահճում-վառվուն և այլն:

Յերբեմն ել մեր պոկետը հանդ ե կազմում նույն բառի կրկնությամբ, մի հանդամանք, վոր ինչպես ձիչտ կերպով նկատում ե պրոփ. Մ. Աբեղյանը. «Վոչ մի հրապույր ու դրավչություն չի տալ վոտանավորներին»:

Բայց յեթե նույն բառի կրկնությամբ հանդ կազմելը միորինակ ե դարձնում հղացումը, ապա իսահակյանը յերբեմն ել այլ պրիոմի յե դիմում, վորով շատ զորեղ ե դառնում հանդը: Դա այն պրիոմն ե, յերբ անկախ տողավերջին հանգից՝ վոտանավորի տողամիջին ու տողասկզբին ել հանդ ե կազմվում: Բրինակ՝

Դարդըս լացե՛ք, սարի սըմբուլ
Ալվան-ալվան ծաղիկներ,
Դարդըս լացե՛ք, բաղի բլբո՛ւլ,
Ամպուղող յերկնուց զով-հովեր...

Իսահակյանն ունի և այնպիսի բանաստեղծություններ, ուր տողամիջին բառն և հանդակից դառնում տողավերջին բառի հետ այսպես որինակ՝

Յես սիրում եմ մըրմունջ— տրոտունջ
Տանջված սրտի յերգ ու վերք:

Ինչպես մեր մի շարք այլ բանաստեղծներ (Հովհաննիսյան, Թումանյան), այնպիս ել Իսահակյանը՝ տողի մեջ վանկերի թիվը հավասար քանակությամբ սպահպաննելու համար թույլ ե տալիս անբնական սրդումներ ։ սղումներ, վորոնք, ինչպես ասում են, աչքի համար են միայն, վորովհետև այսորինակ սրդված բառերը չեն կարդացվում վորպես մի վանկանի բառեր, վշտի, հնդու, աստղ, և այլն։ (Ոլխուի լինի վըշտի, հընդու և այլն։ Իր մի շարք բանաստեղծությունները վերահանտարակելիս Իսահակյանը վերականգնել ե այդ սղումները, սակայն վոչ միշտ և վոչ բոլոր դեպքերում, իսկ յերեմն ել թույլ ե տվել նոր, անբնական սղումներ։

Մեզ կարող են ասել, թե միորինակ հանդերով, անբնական սղումներով զրված Իսահակյանի վորոշ բանաստեղծություններն անդամ չեն դադարում զորեղ տպավորություն գործելուց։ Այդ իհարկե այլպես և, բայց նման տպավորություն թողնելու պատճառը արդեն պոետի բանաստեղծական լեզվի զգայական կողմի ուժեղությունն, ու հնարագիտությունն և, իսկ յերբ այդ ել հերիք չի անում՝ այն ժամանակ բանաստեղծը դիմում է սրտի խորքից յեկող այս կարգի ձայնար-

կումների ու բացականչությունների։ «Հե՛յ վա՛խ ու վախ», «ա՛խ իմ սերը, վա՛խ իմ սերը», «ա՛խ իմ ժամբեն» և այսպես շարունակ։

Վերջացնենք։ Մոտ չորս տասնյակ տարիներ տևող իր դրական արգասավոր գործունեյության ընթացքում, Իսահակյանն անցավ զրական դժվարին մի ճանապարհ, վորի ընթացքում խուսափեց դյուրածին յերգերից և խկական լիբիքական բանաստեղծության անկորնչելի նմուշներ տվեց մեր զրականությանը։ Իսահակյանի արեկի սրբազն բոցով զրված ժողովրդական վորի ունեցող լիազես կյանքու այդ «զմրուխտյայ յերգերում»*), յերեան և յեկել մեր ժողովուրդն իր տոհմիկ յերգերով, իր հայրենի հողով ու ջրով, իր բանաստեղծական վառ յերևակայությամբ։ Այդ յերգերում տեսնում ես հայ աշխատավոր զյուղացուն՝ ջանբեղար մաճկալին իր վար ու ցանքով, փոցիս ու գութանով, դեղնկական պարզ նիստ ու կացով, աղ ու հացով, սիրո, թախծի ու ինդության մանիներով։ Այդ յերգերում ե, վոր արտահայտվել ե պանդուխտ զյուղացու կարուսը դեպի իր վաթանն ու հայրենական ծխացող ոջախը, վորի զյութանքը այնքան մեծ և յեղել

*) Իր 1922 թ. վենիսիկում հրատարակած «Աշնան ժաղկեներ» խորագիրը կրող գրգույկի մեջ տեղ գտած յերգերը բաժիններից մեկը սկսելու վերնագրել և «Զմրուխտյայ յերգեր»։

Հաստատակամութեն՝ իր վերադարձի յիրդը վողող ի-
ւահակյանի համար.

Մայր իմ ժողովուրդը, դեպի քեզ կըդամ,
Կըպամ դեպի քեզ, հայրենի աշխարհ,
Ինչ վոր վեհ ունիմ, սիրով ձեզ կտամ
Յեվ սիրոս, կյանքս միայն ձեզ համար.

Առնելով իր յերեկայական ուղտերի քարայանն
«անտուն դերվիշ»*) վերադարձավ յուր բաղձալի
Հայրենի աշխարհը՝ ընդմիշտ թողնելով «Տիգրիսի
Նոճիածածկ» ափերը. Ինչու՞ն կարող եր իսահակյա-
նը չվերադառնալ այն սիրասուն հայրենիքը, վորը
«լուսաբարբառ ու սիրադեղ կոչով» դեպի իրեն եր
կանչում իր նշանավոր դուսանին:

Իսահակյանը սիրով ընդունեց այդ հրավերը և
դրեց իր հոչակալուր «Պատասխան հայրենիքի կոչին»
բանաստեղծությունը. այդ անունը, այդ վոլորուն
յերգը հնչում եր այսպես.

Պիտի վարվեմ չքնաղ լանջիդ՝
Գարնան վարդով ցնծուն.
Յեվ մայրական անհուն չնչիդ՝
Յորեն արտով ծփուն:

Կանչում ես ինձ լուսաբարբառ
Քո սիրազեղ կոչով,

*) Բաահակյանին նվիրված իր մի բանաստեղծության մեջ
Տերյանը նրան անվանել է «անտուն դերվիշ»:

Դեմքը եմ տեսնում նոր ու պայծառ
Քո հընագեղ վոճով:

Վառ ու հզոր քո ապալան
Պայծակում ե իմ դեմ;
Դու, հավերժող իմ Հայաստան,
Սնուն քաղցր ու վսեմ:



Պատ. խմբագիր՝ Հ. Պարոնյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Ալբումյան
Սրբագրիչ՝ Բ. Ղուկասյան

Գլավիտի լիազոր՝ Զ-1046
Հրատ. № 5058. Պատվել 785.
Տիրաժ 3000. Մեկ մամ. 25000 նվշ.
Հանձնված և արտադրության 10
հոկտեմբերի 1939 թ. Ստորա-
գրված և ապագրության և հուն-
վարի 1940 թ.

Հայպետհրատի Լ տպարան, Յե-
րևան, Լենինի, 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0381457

69.986